4892

ՈՒՂԵՑՈՒՑՑ

ՌԱԴԻՈ ԿԵՏԵՐԻ ՑԵՎ ՏՐԱՆՍԼՅԱՑԻՈՆ ՀԱՆԳՈՒՅՑՆԵՐԻ

1934 թ.

ԱԲՈՆԵՄԵՆՏԱՑԻՆ ՎՃԱՐԻ ՄԱՍԻՆ

654
Ռ-81

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՌԱԴԻՈ ԿԵՆՏՐՈՆԻ

ԵՐԵՎԱՆ—1934 թ.

Պետ. Հանրային գրադարան
Гос. Публ. библиотека
ՀԻՍՀ—ССРА
им. А. Мясникяна

2 0 AUG 2013

Գեղարքունիքի տպարան՝ գրգ. Ա. Հախվերդյանի

Գլավլիտ 25 պատվեր 1136 տիրաժ 1000

654
Ռ-81

24 SEP 2010

Հրատարակություն ԱՍՏԵՂՀ և ՀՍՍՀ ԺԿԽ-ներին կից՝ Անդրկովկասի և Հայաստանի ռադիոֆիկացիայի և Ռադիո հաղորդման կոմիտեների

1. ՏՐԱՆՍԼՅԱՑԻՈՆ ՀԱՆԳՈՒՅՑՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ԱԲՈՆԵՄԵՆՏԱՅԻՆ ՎՃԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ԳԾՈՎ

Ընթացիկ տարում բոլոր տրանսլյացիոն կետերի և այլ ձեռնարկությունների ռադիո հաղորդիչների աբոնեմենտային վճարի գանձումը կատարվելու է բացառապես տրանսլյացիոն հանգույցների միջոցով:

Աբոնեմենտային ամբողջ վճարի մոտ 75 տոկոսը վողջ Միությանը մեջ գանձվելու է Կապի Ժողկոմատի հանգույցների միջոցով: Այդ հանգամանքը բացառիկ պատասխանատվություն է դնում Կապի Ժողկոմատի հանգույցների և նրանց վարիչների վրա՝ գանձման աշխատանքները նորմալ կերպով ծավալելու և տանելու ուղղությամբ:

Կապի Ժողկոմատի յուրաքանչյուր տրանսլյացիոն հանգույցի վարիչ պետք է լավ ըմբռնի, որ ռադիոյի աբոնեմենտային վճարի գանձման գործում նա առաջավոր տեղն է գրավում իր շրջանում:

34553
1007/31013
4899
4892

23.761

1934 թ. տրանսլյացիոն հանգույցները աբոնեմենտային վճարը գանձում են վոչ միայն տեխնիկական սպասարկման համար, ինչպես անցյալ տարի յեր, այլև ռադիո ունկընդրման (լսելու) համար:

Տրանսլյացիոն հանգույցների տերերը, սկսած 1934 թ. հունվարի 1-ից չպետք է աբոնեմենտային քարտեր գնեն: Դրա փոխարեն նրանք միաժամանակ մուծում են աբոնեմենտային վճարի յերկու տեսակը՝ տեխնիկական սպասարկման և ռադիո ունկնդրման համար անմիջականորեն տրանսլյացիոն հանգույցին, իսկ տրանսլյացիոն հանգույցն իր հերթին պարտավոր է անդորրագրեր տալ ռադիո լսողներին: Այդ անդորրագրերում պետք է տեխնիկական սպասարկման և ռադիո ունկնդրման վճարները ցույց տրվեն առանձին-առանձին:

Կապի ժողկոմատի յուրաքանչյուր տրանսլյացիոն հանգույցի վարիչը պարտավոր է ուշադրությամբ կարդալ և յուրացնել այս բրոշյուրում տպագրված կանոններն աբոնեմենտային վճարի գանձման մասին և հրահանգը, վորը տպագրված է Կապի ժողկոմատի հատուկ հրահանգում:

Աբոնեմենտային վճարի գանձման գործում Տրանսլյացիոն հանգույցի աշխատանքի հաջողության ամենագլխավոր պայմանը հանդիսանում է հանգույցի կողմից սպասարկվող ռադիո լսողների հաշվառման դրվածքը:

Յեթե հանգույցը կարողանա կանոնավոր կերպով դնել հաշվառման գործը, ապա նա, անկասկած՝ կկարողանա կատարել աբոնեմենտային վճարի գանձման աշխատանքը և կկատարի գանձման պլանը. իսկ յեթե այդպիսի հաշվառում չլինի, ճեղքվածքներն անխուսափելի կլինեն աբոնեմենտային վճարի գանձման գործում:

Տրանսլյացիոն հանգույցը յուրաքանչյուր աբոնենտի համար պահվում է առանձին աբոնեմենտային քարտ՝ հետևյալ ձևով.—

Աբոնենտ №.....

Ազգանունը, անունը և հայրանունը.....

Հասցեն . . . . . .

Սոցիալական դրությունը . . . . . .

Բարձրախոսի տիպը . . . . . .

Ցերը և միացվել բարձրախոսը «..»... 193 թ.

Գիծը..... Լսողների թիվը.....

Աբոնեմենտային վճարը շահագործման, տեխ. սպասարկման համար . . . . . .ռ. . .

ռադիո ունկնդրման համար . . . . . ռ. . .

| ԳՈՒՄԱՐ | | |

Շատ մեծ արդյունք է տալիս տուգանքների մասին նախազգուշացումներ կատարելը միկրոֆոնի միջոցով և ապա՝ այն ռադիո լսողների ազգանունների հայտարարելը, որոնք տուգանվել են աբոնեմենտային վճարը ժամանակին չմուծելու համար:

Թե միկրոֆոն ունեցող և թե չունեցող հանդուցյալները պարտավոր են, բացի դրանից, անճշտապահ աբոնենտներին գրավոր նախազգուշացում ուղարկել աբոնեմենտային դանձումների վճարման մասին, վճարման համար ժամկետ տալով վոչ ավելի, քան 2–3 որ:

Ինքնըստինքյան հասկանալի յե, վոր այդ միջոցառումները չեն բացասում այն, վոր հանդուցյալների վարիչները և մոնտյորները պետք է անձամբ շրջեն և լինեն ռադիո աբոնենտների բնակարաններում, հիշեցնելով նրանց աբոնեմենտային վճարի մուծման մասին: Ձեռքում ունենալով անդորրագրերի դրքույկը, նրանք հնարավորություն ունեն հենց տեղում ստանալ ռադիո լսողներից աբոնեմենտային վճարները:

Հանդուցյալների վարիչներին և աբոնեմենտային վճարը դանձող մոնտյորներին նյութապես շահագրգռելու համար Կապի ժողկոմատը և Համամիութենական Ռադիո Կոմիտեն համաձայնեցրել են միմյանց հետ այդ անձանց վարձատրելու կարգը: Ռադիո ունկնդրման աբոնեմենտային վճարի գանձման համար, համաձայն Հրահանգի § 25-ի՝ աբոնեմենտային վճարը գանձող ռադիո հանդուցյալի ոգտին հատկացվում է ռադիո ունկնդրման համար գանձված աբոնեմենտային վճարի յուրաքանչյուր ռուբլուց 4 տոկոս:

Աբոնեմենտային վճարի գանձման, լավ կազմակերպման և կոնտրոլ առաջադրանքը 100 տոկոսով կատարելու համար ռադիո հանդուցյալների աշխատողները կարող են պարգևատրվել իրենց կապի շրջանային բաժնի կողմից՝ այն ֆոնդից, վոր գոյանում է նրանց մոտ՝ իրենց շրջանի ռադիո ունկնդրման աբոնեմենտային վճարի գանձման մի տոկոսանոց մասնահանումներից:

Բացի դրանից, ռադիո հանդուցյալների աշխատողներն իրավունք ունեն պարգևատրվելու Համամիութենական Ռադիո Կոմիտեի կողմից առանձնացված պարգևատրման ֆոնդից (ֆոնդի և պարգևատրման ցուցանիշների մասին տես այս բրոշյուրի 48-րդ եջում):

ՌԱԴԻՈ ԿՈՄԻՏԵՆԵՐԻ ՅԵՎ ՌԱԴԻՈ ՀԱՂՈՐԴՄԱՆ ԼԻԱԶՈՐՆԵՐԻ ԴԵՐԸ ՏՐԱՆՍԼՅԱՑԻՈՆ ՀԱՆԳՈՒՅՑՆԵՐՈՒՄ՝ ԱԲՈՆՈՄԵՆՏԱՅԻՆ ՎՃԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Տրանսլյացիոն հանդուցյալներում Ռադիո Կոմիտեների և ռադիո Հաղորդման լիազորների կարորագույն ֆունկցիաներից մեկն եհանդիսանում մասսայական – բացատրական աշ-

խատանքի կազմակերպումը արոնեմենտային վճարի գանձման նպատակների մասին և այն մասին, թե կոնկրետ ինչպես պետք է տանել գանձման աշխատանքը:

Սակայն ընթացիկ տարում ռադիո կոմիտեների և լիազորների համար պակաս կարևորություն չի ներկայացնում նաև ԿԱՊԻ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԵՎ ՄԱՆԱՎԱՆԴ ՏՐԱՆՍԼՅԱՑԻՈՆ ՀԱՆԳՈՒՅՑՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐՎՈՂ ԱՐՈՆԵՄԵՆՏԱՅԻՆ ՎՃԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ:

Ինչու հատկապես այս տարի յե ուժեղանում ռադիո կոմիտեների և լիազորների դերը վերահսկողության գործում:

Այդ հարցի պատասխանն այն է, որ արոնեմենտային վճարի գանձման գործի ծանրության կենտրոնն այս տարվանից սկսած հիմնականում փոխադրվում է ինչպես Կապի Ժողկոմատի տրանսլյացիոն հանգույցների, այնպես և պրոֆմիությունների ու այլ գերատեսչությունների հանգույցների աշխատանքների վրա:

Բավական է նշել այն, որ 1934 թվին արոնեմենտային վճարի ամբողջ գումարի 80 տոկոսը պետք է հավաքվի տրանսլյացիոն հանգույցների կողմից և միմիայն 20 տոկոսը՝ Կապի Ժողկոմատի փոստային ձեռնարկների կողմից: Դա բացատրվում է նրանով, որ, նոր կանոնների համաձայն, 1934 թվին տրանսլյացիոն կետերի վճարը հավաքվելու յե բացառապես տրանսլյացիոն հանգույցների միջոցով:

Տրանսլյացիոն կետերի արոնեմենտային վճարի գանձման գործը տանելու յեն Կապի Ժողկոմատի 3000 և պրոֆմիությունների ու այլ գերատեսչությունների 2200 հանգույցները:

Ինչ վերաբերում է յեթերային (эфирные) ռադիո ընդունիչների արոնեմենտային վճարին, այդպիսին, ինչպես անցյալ տարի յեր, գանձելու յեն Կապի Ժողկոմատի 40·000-ից ավելի փոստային ձեռնարկները:

Ինքնըստինքյան հասկանալի յե, որ չափազանց դժվար կլիներ Կապի Ժողկոմատի տասնյակ հազարավոր ձեռնարկների աշխատանքը ընդգրկել վերահսկողության գործում: Այստեղ ռադիո կոմիտեների և լիազորների պարտականությունները հիմնականում կենտրոնանալու յեն Կապի շրջանային բաժինների վարիչների, (РОЗ) ինչպես նաև քաղաքներում, արդյունաբերական կենտրոններում ու այլ տեղերում գտնվող ամենից ավելի հաստատուն փոստային ձեռնարկների աշխատանքի վերահսկողության գործում:

Վոչ մի դեպքում չթույլատրելով յեթերային ընդունիչների արոնեմենտային վճարի գանձման վերահսկողությունը և վերջինիս իրագործման խնդրում գիմելով պրոֆմիութենական և կոմյերիտական կազմակերպությունները

ների աջակցությանը, ՌԱԴԻՈ ԿՈՄԻՏԵՆԵՐԸ և նրանց լիազորներն ԻՐԵՆՑ ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏՔ Է ՄԱՔՍԻՄԱԼ ԶԱՓՈՎ ԿԵՆՏՐՈՆԱՑՆԵՆ աբոնեմենտային վճարի գանձման ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎՐԱ, ՎՈՐ ԿԱՏԱՐՈՒՄ ԵՆ ՏՐԱՆՍԼՅԱՑԻՈՆ ՀԱՆԳՈՒՅՑՆԵՐԸ։

Ցուրաքանչյուր ռադիո կոմիտեի և հանգույցի լիազորի առաջ դրված են հետևյալ յերեք հիմնական խնդիրները.

Առաջին խնդիրը.— Ռադիո կոմիտեները և հանգույցի լիազորները պետք է ճգտեն, վոր հանգույցները կազմակերպեն տրանսլյացիոն կետերի իրական հաշվառման գործը։ Տրանսլյացիոն կետերի այդպիսի հաշվառման բացակայությունը մինչև որս հանդիսանում է հանգույցների աշխատանքի ամենաթույլ տեղը։ 1932 և 1933 թվերին Կապի Վարչությունների կողմից կատարվող «Ցանցի ճշտումները», ինչ պես գիտենք, այն հետևանքն ունեցան, վոր մաղվեցին, այսպես կոչված, «մեռած հոգիները», այսինքն այն կետերը, վորոնք գոյություն ունեին միմիայն թղթի վրա։

Գոյություն չունեցող կետերն ամենակարճ ժամանակամիջոցում պետք է հանվեն հաշվառումից և չպետք է խճողեն հաշվառման ցուցակները։ Ռադիո կոմիտեները և լիազորները պետք է հետևեն, վոր այժմ վոչ մի «մեռած հոգի» չլինի հանգույցներում։ Ցուրաքանչյուր Ռադիո աբոնենտ վոչ միայն պետք է հաշվի առնվի հանգույցի քարտում, այլև պետք է գոյություն ունենա իրականում։ Հանգույցի հաշվառումը մաքրելու աշխատանքը պետք է կատարվի ամենակարճ ժամանակամիջոցում— ռադիո կոմիտեները պետք է պնդեն այդ բանը և անպայման հասնեն դրան։

Յերկրորդ խնդիրը— Ռադիո կոմիտեները և հանգույցի լիազորները աբոնեմենտային վճարը մուծելու գործում անպայմանորեն պետք է ընդգրկեն ինչպես Կապի ժողկոմատի հանգույցների, այնպես և այլ կազմակերպությունների ու պրոֆմիությունների հանգույցների բոլոր աբոնենտներին՝ առանց բացառության։

Անհրաժեշտ է պարբերական ստուգումներ կատարել (առանձին հանգույցների գծով), պարզելու համար, թե ինչպես է գնում աբոնեմենտային վճարի գանձումը, արդյոք ժամանակի՞ն են ուղարկվում ծանուցումները յետմնացող աբոնենտներին, արդյոք ռադիոֆիկացիան և միկրոֆոնը (վորտեղ այդպիսին կա)՝ լսողներին ինֆորմացիա տալու ժամկետների մասին, մուծումը ժամանակին չկատարողների մասին, վճարը չարամտորեն չմուծողների մասին և նշանակված տուգանքների մասին։

Ռադիո կոմիտեների և լիազորների այդ աշխատանքը չպետք է համարվի ինչ-վոր ժամանակավոր կամպանիա, այլ պետք է կրի մշտական, կազմակերպված նպատակադրված բնույթ. և վերջապես՝

Յերրորդ խնդիրը.— *Ռադիո կոմիտեները և լիազորները պետք է ունենան մշտական հսկողություն, որ հրահանգի համաձայն, Կապի Ժողկոմատի աբոնեմենտային վճարներից գանձված գումարները ժամանակին փոխանցվեն տրանսլյացիոն հանգույցների կողմից:*

Տրանսլյացիոն հանգույցներում հավաքված գումարների կուտակման մասին յուրաքանչյուր անգամ անհրաժեշտ է անմիջապես իրազեկ դարձնել Կապի շրջանային բաժինների վարիչներին և Կապի վարչություններին:

Կասկած չկա, որ հաշվառման կազմակերպման հսկողության և ստուգման գործը հանգույցներում կենտրոնացնելը վողջունելու յեն նաև իրենք՝ հանգույցները: Այդպիսի հսկողությունը և ամենօրյա ստուգումը հանգույցներին կոժանդակեն տրանսլյացիան վերակառուցելու և կարգի բերելու հանգույցային ցանցի հաշվառումը և միաժամանակ կուժեղացնեն վոչ միայն ռադիո ունկնդրման, այլև տեխնիկական սպասարկման աբոնեմենտային վճարի ստացման գործը:

---

3. ԻՆՉ ՊԵՏՔ Է ԻՄԱՆԱ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՌԱԴԻՈ ԼՍՈՂ՝ ԱԲՈՆԵՄԵՆՏԱՅԻՆ ՎՃԱՐԻ ՄԱՍԻՆ

Յուրաքանչյուր ռադիո լսող պետք է իմանա, վոր նրա պարտականությունն է, վորպես խորհրդային քաղաքացի, ժամանակին և կանոնավոր կերպով կատարել աբոնեմենտային վճարի մուծումը:

Ռադիո հաղորդման կազմակերպումը և ծրագրի կատարումը մեծ ծախսեր են պահանջում պետությունից: Միքանի տասնյակ ռադիո կայանների աշխատանքի վարձի վճարումը, ռադիո ստուդիաների և ապարատների սեփականների ծախսը հոգալը, նվագախմբերին, յերգեցիկ խմբերին, առանձին արտիստներին, յերգիչներին, դասախոսներին, դիկտորներին վարձատրելը, վերջապես՝ հեղինակներին պատվիրվող գրական և յերաժշտական նյութերի ծախսերը— այդ բոլորը շատ մեծ գումարներ են կազմում:

Ռադիո լսողների մուծած աբոնեմենտային վճարով ներկայումս ծածկվում է ռադիոյի վրա պետության կատարած ծախսերի միայն մի աննշան մասը: Մնացած ամբողջ գումարը տալիս է պետությունը: Յեվ ահա այդ հանգամանքը ռադիո լսողների վրա պարտականություն է դնում ճշտապահ լինելու աբոնեմենտային վճարի հերթական մուծումների գործում:

Յուրաքանչյուր ռադիո լսող պետք է իմանա, վոր ամեն մի անճշտապահություն աբոնեմենտային վճարի մուծման գործում խանգարում է ռադիոֆիկացիայի և ռադիո հաղորդման նորմալ զարգացմանը:

1933 *թվին աբոնեմենտային վճար սահմանելու մասին կառավարական վորոշման մեջ*

մատնանշված եր, վոր աբոնեմենտային վճարը սահմանվում է «ռադիոֆիկացիայի և ռադիո հաղորդման սեփական ֆինանսական բազան ամրացնելու և նրանց հետագա զարգացումն ապահովելու նպատակով»:

Այդ պատճառով ռադիո լսողի կողմից չի մուծված աբոնեմենտային վճարի ամեն մի ռուբլին արգելակում է ռադիոֆիկացիայի և ռադիո հաղորդման գործը:

Մյուս կողմից՝ ժամանակին մուծված ամեն մի ռուբլին նպաստում է տրանսլյացիոն հանգույցների, կետերի և յեթերային ռադիո ընդունիչների ցանցի զարգացմանը, ավելացնում է ռադիո լսողների թիվը և ապահովում նրանց քաղաքական ու կուլտուրական զարգացման հնարավորությունը:

Դրա հետ միասին աբոնեմենտային վճարը ժամանակին և լրիվ կերպով մուծելը ռադիո կոմիտեներին հնարավորություն է տալիս, յերնելով ռադիո լսողների շահերից, բարձրացնելու ռադիո հաղորդման վորակը, հրավիրելու լավագույն կատարողներ, ուժեղացնելու նվագախմբերը, յերգեցիկ խմբերի կազմը և այլն:

Յուրաքանչյուր ռադիո լսող պետք է իմանա, վոր աբոնեմենտային վճարից չարամտորեն խուսափելը և գաղտնի կերպով լսելը խորհրդային պայմաններում ամոթալի և անթույլատրելի յերեվույթ է:

Գաղտնի կերպով լսելը լավագույն դեպքում պետք է ընդունվի վորպես վոչ գիտակից վերաբերմունք դեպի ռադիոն, իսկ հակառակ դեպքում՝ դա նշանակում է ուղղակի խաբել պետությանը:

Դեռ կան շատերը, վորոնք աբոնեմենտային վճարը չմուծողներին և գաղտնի կերպով լսողներին համարում են «քաջեր», «ղոչաղներ»: Հաճախ մեզ մոտ կարելի է լսել այսպիսի խոսքեր. «բոլորը փող են տալիս իրենց ընդունիչների համար, բայց Կիրակոսն ու Մարկոսը վո՞նց են կարողանում ծլկվել, ա՛յ քեզ ղոչաղություն»:

Այժմ պետք է ամբողջովին վերջ տրվի նման վերաբերմունքին դեպի այդպիսի ռադիո լսողները:

Յեթե մեր որենքները քրեական պատասխանատվության են յենթարկում այն քաղաքացիներին, վորոնք ելեկտրական վառարաններով, թեյամաններով, արդուկներով ոգտվելու ժամանակ, զբաղվում են ելեկտրոեներգիայի գողությամբ՝ ապա անհրաժեշտ է նկատի ունենալ, վոր ռադիոյի գողությունը նույնպես համարվում է ելեքտրոեներգիայի յուրատեսակ գողություն, միայն այն տարբերությամբ, վոր այդ եներգիան տարածվում է վոչ թե ելեքտրոկայանից, այլ ռադիո հաղորդչից:

Փոխանակ կոտրելի ձևով և զիջող վերա-

34555
Լ00Ա
31013

ՀՍՍՀ Գլխ. գրադարան
ՀՍՍՀ—ԿՈՓԱ
անվ. Ա. Մասիսյանի
Ա. Մեսրոպի անվան

բերվելու, աբոնեմենտային վճարը ժամանակին մուծող ամեն մի աբոնենտ պետք է դատապարտի չվճարողներին և նրանց գիտակցության, բերելով՝ համոզի մուծելու իրենց հասանելիք աբոնեմենտային վճարը:

Իսկ յեթե համոզելու ձևը չի ազդի, այն ժամանակ ամեն մի գիտակից և բարեխիղճ ռադիո լսող պարտավոր է հայտնել մոտակա փոստային ձեռնարկին կամ հանդուցյին աբոնեմենտային վճարից չարամտորեն խուսափող այն անձնավորության մասին, վոր հայտաբերվել է իր կողմից: Նման դեպքերում չպետք է քաշվել: Վճարը չմուծող ռադիո լսողն այդպիսի հայտաբերման հետևանքով կմերկացվի և կտուգանվի, բացի դրանից, նրանից կդանձվի անլեգալ կերպով լսելու ամբողջ ժամանակաշրջանի աբենեմենտային վճարը: Վոչ մի դեպքում չպետք է լինի գաղտնի կերպով լսող և վճարը չմուծող ռադիո լսողների նկատմամբ:

Բոլոր նրանք, ովքեր չցուցակագրված ռադիո սարքավորման տիրոջ անունը և հասցեն հաղորդում են փոստային ձեռնարկին կամ ռադիո հանդուցյին, պետք է գիտենան, վոր այդպիսի հայտարարությամբ նրանք կատարում են միմիայն իրենց պարտքը՝ վորպես խորհրդային քաղաքացի և վորպես գիտակից ռադիո լսող:

Յուրաքանչյուր՝ տուգանված ռադիո չսող

պետք է իմանա, վոր խորհրդային որենքը շատ մեղմ և դիջող է վճարից խուսափողի և գաղտնի կերպով չսողի վերաբերյալ, վորը տուգանվում է կես տարվա աբոնեմենտային վճարի չափով: Արտասահմանում՝ Ավստրիայում, Լեհաստանում, Բուլգարիայում գաղտնի կերպով լսելու համար վորոշվում է բանտարկություն 1–3 ամիս և նույնիսկ մինչև մեկ տարի ժամանակով: Բելգիայում, Գերմանիայում, Իտալիայում, Շվեդիայում և այլ պետություններում գաղտնի կերպով լսողներին ստիպում են խոշոր տուգանք վճարել, բացի դրանից, գրավում են, այսինքն՝ խլում են նրանց ընդունիչը:

Խորհրդային որենքն առայժմ այդպիսի խիստ միջոցների չի դիմում գաղտնի կերպով լսողների նկատմամբ, սահմանափակվելով միմիայն տուգանքով՝ աբոնեմենտային կիսամյա վճարի չափով: Դա, անկասկած, բացատրվում է նրանով, վոր մեր որենքը, հրաժարվելով բռնի կերպով ազդելու մեթոդներից, ցանկանում է ազդեցություն գործել ամեն մի ռադիո լսող քաղաքացու գիտակցության վրա:

Ռադիո լսող ընկերներ,

Վճարը մուծեցեք ձեզ հասանելիք աբոնեմենտային ժամանակին և կանոնավոր կերպով:

Թույլ չտաք, վոր հերթական մուծումների ժամանակն անցնի:

Ազդեցեք այն ռադիո լսողների վրա, վո-

բոնք անգիտակցաբար ձգձգում են որեցոր վճարների մուծումները կամ խուսափում այդ մուծումները կատարելուց:

Հրաժարվեցեք բարեհոգի և զիջող վերաբերմունք ունենալուց դեպի այն աբոնենտները, վորոնք խուսափում են մուծումները կատարելուց, համոզեցեք նրանց մուծելու աբոնեմենտային վճարը, իսկ համառելու դեպքում՝ հայտնեցեք նրանց ազգանունը և հասցեն մոտակա փոստային հիմնարկին:

Հիշեցեք, վոր այդպես վարվելով դուք կատարում եք ձեր քաղաքացիական պարտքը և միաժամանակ նպաստում եք ռադիոֆիկացիայի զարգացմանը, ինչպես և այն ռադիո հաղորդման վորակի բարձրացմանը, վոր դուք ինքներդ լսում եք ամեն որ:

Ռադիո լսողներից մի քանիսը դժգոհություն են հայտնում ռադիո ունկնդրման համար աբոնեմենտային վճար մուծելու առթիվ: *Նրանք կարծում են, թե պետությունը բոլորովին ձրի պետք է տրամադրի ռադիո հաղորդումը բոլոր նրանց, ովքեր ընդունիչներ են ձեռք բերել կամ իրենց բնակարանում ռադիո կետ են դրել:*

Այդ կարծիքը միանգամայն սխալ է:

Ռադիո հաղորդումը հանդիսանում է աշխատավորների մասսայական-կուլտուրական սպասարկման ձևերից մեկը: Կուլտուրական սպասարկման բոլոր այլ տեսակները—գիրք, թերթը, թատրոնը, կինոն վոչ վոքի ձրի չի տրամադրվում: Դա հասկանալի է, քանի վոր բեմադրությունները, կինո նկարների արտադրությունը, գրքերի և թերթերի տպագրությունը բավականաչափ դրամարներ են պահանջում և այդ դրամական միջոցները պետք է վերադարձվեն պետությանը: Վոչ վոքի մըտքովն անգամ չի անցնում պահանջել, վոր թատրոն հաճախելը ձրի լինի: Իսկ ինչ վերաբերում է ռադիոյին, այստեղ արդեն վոմանք հնարավոր են համարում ձրի հաղորդում պահանջել: Ի հարկե, այդպիսի պահանջն անհիմն պետք է համարել:

Կան նաև ռադիո լսողներ, վորոնք թեև կարծում են, վոր ռադիո լսողներից հարկավոր է աբոնեմենտային վճար գանձել, սակայն գտնում են, վոր ներկայումս գանձվող վճարը չափազանց բարձր է և ռադիո լսողների ուժերից վեր է:

Տեսնենք, թե արդյոք ճի՞շտ են մտածում նրանք

Լամպային ընդունիչի աբոնեմենտային վճարը տարեկան 24 ռուբլի է, իսկ դեղեկատորային ընդունիչինը՝ տարեկան 3 ռուբլի:

Եթե այդ թիվը բաժանենք որերի վրա, կտեսնենք, վոր լամպային ընդունիչից ոգտվելու համար գանձվող վճարը կազմում է որական մոտ $6^1/_2$ կոպեկ, իսկ դեղեկատորային ընդունիչի համար՝ 1 կոպեկից պակաս:

Ահա այդպիսի ենչին գումարով ռադիո լսողը կարող է ամեն որ լսել առավոտյան ֆիզկուլտ հաղորդում, վերջին լուրերը, տարբեր լեզուների դասեր, տեղական ինֆորմացիաներ, յերեխաների համար հաղորդում, զանազան գրական հաղորդումներ, դեկլամացիաներ, դրամոֆոնային յերաժշտություն, համերգներ, ինչպես նաև բեմադրություններ ու ոպերաներ, վորոնք տրանսլյացիայի յեն յենթարկվում Մոսկվենական հանրապետությունների լավագույն թատրոններից:

Այս բոլորից հետո մի՞թե կարելի յե խոսել վճարի թանգլինելու մասին: Ի հարկե՝ վոչ:

Մի փոքր ավելի բարձր է (և այն ել միայն լսողների վորոշ կատեգորիաների համար) տրանսլյացիոն հանդուլյցների տրանսլացիոն կետերից ոգտվելու աբոնեմենտային վճարը:

Այդ վճարն որական 6-ից մինչև 13 կոպեկ է: Սակայն պետք է նկատի ունենալ, վոր այդ վճարի մեջ է մտնում նաև ռադիո կետի տեխնիկական սպասարկման և վերանորոգման ծախսը, ինչպես նաև հանդուլյցում աշխատող տեխնիկների աշխատավարձի վճարը, ռադիո հանցուլյցի նորմալ աշխատանքն ապահովող մատերիալներ (ռադիո լամպեր և այլն) գնումը: Այստեղից արդեն հասկանալի յե, վոր որական 6-ից մինչև 13 կոպեկ վճարը ռադիո լսողի համար չի կարելի համարել չափազանց բարձր և ծանր: Յեթե բանվորը կամ ծառայողը

չի զլանում ամեն որ տաս կոպեկ ծախսելու «Խորհրդային Հայաստան», «Պրավդա» կամ «Զարյա Վոստոկա» գնելու համար, վորպեսզի ծանոթանա քաղաքական վերջին նորություններին և խորհրդային շինարարության մասին տրվող ինֆորմացիաներին, այդ դեպքում, ի հարկե, այն հարմարությունը, ոգուտը և կուլտուրական բավականությունը, վոր ռադիո լսողը և նրա ընտանիքն ստանում են հաղորդումներից, պետք է վարձատրվեն համենայն դեպս մի վորոշ գումարով:

Այսպիսով՝ անհիմն են բոլոր կարծիքներն այն մասին, թե աբոնեմենտային վճարը բարձր է:

---

4. ԻՆՉ ՊԵՏՔ Է ԻՄԱՆԱՆ ԱԲՈՆԵՄԵՆՏԱՅԻՆ ՎՃԱՐԻ ՄԱՍԻՆ ՆԱՄԱԿԱՏԱՐՆԵՐԸ, ՀԱՆԳՈՒՅՑՆԵՐԻ ՄՈՆՏՅՈՐՆԵՐԸ, ՓՈՍՏԱՅԻՆ ԶԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԸ ՅԵՎ ԱՅԼ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԸ, ՎՈՐՈՆՔ ԱՆՄԻՋԱԿԱՆՈՐԵՆ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՆ ԴԵԴԵԿՏՈՐԱՅԻՆ ՅԵՎ ԼԱՄՊԱՅԻՆ ԸՆԴՈՒՆԻՉՆԵՐԻ ԱԲՈՆԵՄԵՆՏԱՅԻՆ ՎՃԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Նրանք պետք է գիտենան, վոր

Առաջին.— 1934 թվին լամպային և դեդեկտորային ընդունիչների աբոնեմենտային վճարը դանձվում է հետևյալ ձևով.—առաջին կիսամյակում ռադիո լսողներին տրվում են աբոնեմենտային քարտեր, իսկ յերկրորդ կի-

սամյակում՝ հատուկ ռադիո մարկաներ, վոր բաց ե թողնելու Կապի Ժողովրդական Կոմիսարիատը:

Յերկրորդ.—Առաջին կիսամյակի վճարը գանձվելու յե միանվագ՝ վոչ ուշ, քան ս.թ. մայիսի 15-ը:

III կվարտալի (այսինքն՝ հուլիս, ոգոստոս և սեպտեմբեր ամիսների) վճարը գանձվելու յե վոչ ուշ, քան հուլիսի 15-ը և IV-րդ կվարտալի (այսինքն՝ հոկտեմբեր, նոյեմբեր և դեկտեմբեր ամիսների) վճարը՝ վոչ ուշ, քան հոկտեմբերի 15-ը:

Յերրորդ.— 1934 թ. բոլոր տեսակի լամպային ընդունիչների համար գանձվում ե միատեսակ աբոնեմենտային վճար՝ տարեկան 24 ռ.:

Դեդեկտորային ընդունիչի համար գանձվում ե տարեկան 3 ռուբլի աբոնեմենտային վճար, ինչպես անցյալ տարի յեր:

ԻՆՉԻ՞ ՀԱՄԱՐ ՊԵՏՔ Ե ՊԱՅՔԱՐԵՆ ԼԱՄՊԱՅԻՆ ՅԵՎ ԴԵԴԵԿՏՈՐԱՅԻՆ ՌԱԴԻՈ ԸՆԴՈՒՆԻՉՆԵՐԻ ՎՃԱՐԸ ԳԱՆՁՈՂՆԵՐԸ 1934 ԹՎԻՆ:

Աբոնեմենտային վճարի գանձման գործով զբաղվող՝ Կապի յուրաքանչյուր աշխատակից պետք ե պայքարի նրա համար, վոր իր սպասարկած ռայոնում ռադիո լսողներին 100 տոկոսով ընդգրկի աբոնեմենտային վճարը մուծելու գործում:

Աբոնեմենտային վճար գանձող յուրաքանչյուր ընկեր պետք ե հետևի, վոր իր աշխատանքի ռայոնում չլինի վոչ մի չցուցակագրված ռադիո լսող, վոչ մի գաղտնի ռադիո լսող և աբոնեմենտային վճարը ժամանակին չմուծած լամպային կամ դեդեկտորային ռադիո ընդունիչի վոչ մի տեր:

ԻՆՉ ՄԻԶՈՑՆԵՐ ԿԱՆ ՌԱԴԻՈ ԼՍՈՂՆԵՐԻՆ ՀԱՅՏԱԲԵՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Քաղաքներում, վորտեղ կան Բնակվարձկոոպ Ընկերություններ, տնային վարչություններ, պարետային մասեր, հանրակացարաններ և այլն, գանձողները պետք ե կապվեն տների վարիչների, պարետների հետ և այդ անձնավորություններից պահանջեն տեղեկություններ նրանց տներում կամ հանրակացարաններում ապրող այն ռադիո լսողների մասին, վորոնք ունեն լամպային կամ դեդեկտորային ընդունիչներ:

Գյուղերում աբոնեմենտային վճար գանձողներն այդ տեղեկությունները կարող են ստանալ գյուղխորհուրդներից:

Յեթե տան վարիչը կամ գյուղխորհուրդն այս կամ այն պատճառով հրաժարվում են նման տեղեկություններ տալուց, այն ժամանակ պետք ե հիշեցնել, վոր նրանք պարտավոր են այդ անել՝ համաձայն գոյություն ունեցող որենքի: Այդ որենքը ԽՍՀՄ Ժողկոմխորհի 1934 թ. մարտի 27-ի վորոշումն ե՝

աբոնեմենտային վճարի մասին։ Այդ որենքը զետեղված է այս բրոշյուրի 46-րդ եջում։ Որենքի 24-րդ հոդվածում ասված է, վոր տնային վարչությունները և դյուղխորհուրդները պարտավոր են ստուգել աբոնեմենտային վճարի ցուցակագրման փաստաթղթերը։ Ստուգելով այդ փաստաթղթերը, տնային վարչությունները կամ դյուղխորհուրդները տեղեկություններ պետք է ունենան այն մասին, թե տան բնակիչներից կամ դյուղում ապրողներից ո՞վքեր են ոգտվում ռադիո ընդունիչներից։

Քաղաքի նամակատարներն իրենց հանձնված քաղաքամասերում նամակները բաժանելու ժամանակ պետք է հարց ու փորձ անեն բնակարանների ավագին կամ բնակարանի պատասխանատու վարձողին և իմանան, թե ո՛ւմ բնակարաններում կան ընդունիչներ։

Ռադիո ընդունիչ ունենալու մասին տեղեկություն ստանալուց հետո հարկավոր է ստուգել, թե ստացվա՞ծ է արդյոք նրա ցուցակագրման համար համապատասխան քարտ, և յեթե կա՝ արդյոք հերթական մուծման ժամանակը չի՞ անցել։ 1934 թվի համար այդպիսի քարտ չունենալու կամ մուծման ժամանակն անցած լինելու դեպքում հարկավոր է անմիջապես արձանագրություն կազմել տուդանք դանձելու համար և տեղն ու տեղը պահանջել աբոնեմենտային մուծումների վճարը։

Արձանագրության ձևը տպագրված է այս բրոշյուրի 73-րդ եջում։

Բոլոր նրանց, ովքեր աբոնեմենտային վճարը դանձում են քաղաքում, վորտեղ կան ռադիո կոմիտեներ, հանձնարարվում է շամպային և դեդեկտորային ընդունիչների տերերի ազգանունները և հասցեները ստանալ իրենց փոստի բաժանմունքների վարիչների միջոցով։ Այդ ազգանունները և հասցեները կան նաև ռադիո կոմիտեներում և գրված են անցյալ տարվա աբոնեմենտային քարտերի արմատների վրա։ Գանձողները պետք է առաջարկեն փոստի բաժանմունքների վարիչներին՝ ռադիո կոմիտեների հետ միասին կազմել ռադիո լսողների ցուցակները, գրելով նաև նրանց հասցեները։ Հարկավոր է սակայն կազմել միայն այն ռադիո լսողների ցուցակները, վորոնք անցյալ տարի գնել են 1 ռ. 50 կոպեկանոց (դեդեկտորային) և 9 ու 12 ռուբլիանոց (լամպային) կիսամյա քարտեր։

Ստանալով ռադիո լսողների ցուցակը, վորտեղ գրված են ազգանունները և հասցեները, գանձողը հեշտությամբ կարող է ստուգել, թե նրանցից ո՛վքեր են մուծել և ո՛վքեր չեն մուծել աբոնեմենտային վճարը։ Ինքնըստինքյան հասկանալի յե, վոր յուրաքանչյուր գանձող իր ուշադրությունը պետք է կենտրոնացնի արտաքին անտենիկների վրա, վորոնք գրված են չենքերի կտուրներին։ Անտենաներով կարելի յե հեշտությամբ գտնել ռադիո ընդունիչի տերերին։ Տեսնելուց հետո հարկա-

վոր է տան դռնապանին կամ հանրակացարանի պարետին հարցնել և պարզել թե ումն է պատկանում այդ անտենան։

ԱԲՈՆԵՄԵՆՏԱՅԻՆ ՎՃԱՐԸ ԳԱՆՁՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՎԱՐՁԱՏՐՄԱՆ ԻՆՁՊԻՍԻ ՏԵՍԱԿՆԵՐ ԿԱՆ.

Յուրաքանչյուր վճարված 12 ռուբլանոց աբոնեմենտային քարտի համար գանձողն ստանում է վարձատրություն՝ աբոնեմենտային քարտի արժեքի 3 տոկոսի չափով։

Այդ վարձատրությունն անմիջապես վճարվում է գանձողին այն ժամանակ, երբ վերջինս քարտի արմատը հանձնում է այն փոստային ձեռնարկին, վորտեղից ստացվել է այդ քարտը։

Սակայն հարկավոր է նկատի ունենալ, վոր այդ վարձատրությունը վճարվում է միայն այն գանձողներին, վորոնք բարտը վաճառել են ռադիո լսողին նրա տանը։ Այն փոստային աշխատողները, վորոնք ռադիո քարտերը վաճառում են ձեռնարկություններում, յերբեք տոկոսանոց վարձատրությունը չեն ստանում։

Բացի յերբեք տոկոսանոց վարձատրությունից, յուրաքանչյուր գանձող կարող է նաև պարգևատրություն ստանալ քարտերի տարածման գծով տարած իր հարվածային աշխատանքի համար, յեթե 100 տոկոսով կատարել և գերակատարել է իրեն տրված կոնտրոլ առաջադրանքը։

Պարգևատրության արժանանալու համար գանձողը պետք է տա այդ աշխատանքի գծով լավագույն վորակական և քանակական ցուցանիշներ։

Աբոնեմենտային վճարը գանձողներին և առհասարակ այն աշխատողներին, վորոնք մասնակցություն ունեն այդ գործում, պարգևատրությունը վճարվում է յերկու աղբյուրից։

Առաջին աղբյուրը—դա աբոնեմենտային վճարի գումարներից կատարվող տոկոսային մասնահանումներն են, վոր ստացվում են Կապի մարմինների ոգտին։

Յերկրորդ աղբյուրը—դա 75000 ռուբլի յեկամուտն է, վոր առանձնացվել է Համամիութենական Ռադիո Կոմիտեյի կողմից՝ 1934 թվին աբոնեմենտային վճարը լավագույն կերպով գանձողներին և այդ գործի լավագույն կազմակերպիչներին պարգևատրելու համար։

Այս բրոշյուրի 52-րդ եջում տպագրված են աբոնեմենտային վճարի գանձման ամենաակտիվ հաշվառողներին 1934 թվին պարգևատրելու ցուցանիշները, վոր հաստատված է Համամիութենական Ռադիո Կոմիտեյի կողմից։

Հանձնարարվում է բոլոր ընկերներին, վորոնք մասնակցում են գանձման և նրա կազմակերպման գործում, մանրամասնորեն ծանոթանալ այդ ցուցանիշներին, գիտենալու հա-

մար, թե ինչի՞ վրա պետք է կենտրոնացնել ուշադրությունը՝ աշխատանքը հաջող տանելու և պարգևատրություն ստանալու համար:

Բացի պարգևատրությունից, յուրաքանչյուր աբոնեմենտային վճար դանձող, վոր հայտարերում է հաշվի չառնված կամ վճարը ժամանակին չմուծած ռադիո լսողներ, իրավունք ունի վարձատրություն ստանալ այն տուգանքից, վոր դանձվում է գաղտնի կերպով լսողից կամ վճարը ժամանակին չմուծող աբոնենտից:

Վարձատրությունը տրվում է դանձված տուգանքի 20 տոկոսի չափով և միայն այն ժամանակ, յերբ տուգանքը փաստորեն դանձված է լինում հանցավորից:

Քանի վոր նոր որենքի համաձայն՝ տուգանքը հանձնվում է կիսամյա աբոնեմենտային վճարի չափով, ապա ուրեմն գաղտնի լսողին հայտարերելու համար տրվող պարգևատրությունը յուրաքանչյուր լամպային ընդունիչի համար կազմում է 2 ռ. 40 կոպեկ, իսկ յուրաքանչյուր դեդեկտորային ընդունիչի համար՝ 30 կոպեկ:

---

5. ԻՆՉՈՎ Ե ՏԱՐԲԵՐՎՈՒՄ ԱՅՍ ՏԱՐՎԱ ԱԲՈՆԵՄԵՆՏԱՅԻՆ ՎՃԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ԿԱՐԳՆ ԱՅՆ ԿԱՐԳԻՑ ՎՈՐ ԳՈՅՈՒԹՈՒՆ ՈՒՆԵՐ ԱՆՑՅԱԼ ՏԱՐԻ

(ԽՕՀՄ Ժողկոմխորհի 1934 թ. մարտի 27-ի վորոշումից)

ՏՐԱՆՍԼՅԱՑԻՈՆ ԿԵՏԵՐԻ ԳԾՈՎ

1934 թ. մարտի 27-ի կառավարական վորոշմամբ՝ Կապի Ժողկոմատին և Համամիութենական Ռադիո Կոմիտեյին առաջադրված է սահմանել տրանսլյացիոն կետերից ոգտվելու համար դիֆերենցիալ աբոնեմենտային վճար:

Այդ վճարը դիֆերենցիալ է կոչվում այն պատճառով, վոր նրա չափը վորոշելիս՝ հաշվի յե առնվում մի կողմից այն վայրը (հանրապետություն, յերկիր, մարզ), վորտեղ ապրում է ռադիո լսողը, իսկ մյուս կողմից՝ ռադիո լսողի սոցիալական կատեգորիան, այսինքն այն, թե արդյոք ռադիո լսողը բանվո՞ր է, կոլտնտեսակա՞ն, թե՞ ծառայող:

Հանրապետությունները, յերկիրները և մարզերը բաժանված են յերեք գոտու:

Առաջին գոտու մեջ են մտնում հեռավոր վայրերը և հեռավոր ազգային հանրապետությունները (Հեռավոր Արևելյան Յերկիրը, Արևելյան Սիբիրը, Ուզբեկստանի, Թուրք-

մենստանի և Տաջիկստանի հանրապետությունները և այլն)։

Ցերկրորդ գոտու մեջ են մտնում գլխավորապես գյուղատնտեսական մարզերը և արդյունաբերական ռայոնների մի մասը։

Ցերրորդ գոտու մեջ են մտնում խոշորագույն արդյունաբերական կենտրոնները (Մոսկվան, Լենինգրադը, Խարկովը, Սվերդլովսկն իր մարզերով) և այն գյուղատնտեսական ռայոնները, որոնք չեն մտել II-գոտու մեջ։

Աբոնեմենտային վճարի մանրամասն տարիֆները յուրաքանչյուր գոտու և ռադիո լսողների կատեգորիաների համար տպագրված են այս բրոշյուրի 35-րդ եջում։

Այդ տարիֆները քննելիս կարելի է տեսնել, որ բանվորների և կոլտնտեսականների կատեգորիաների համար, մանավանդ I և II գոտիների համաձայն՝ աբոնեմենտային վճարը բավականաչափ իջեցված է, որով թեթևանալու է ռադիո լսողի կողմից կատարվող մուծումը։

Նոր որենքը և կանոնները բավականաչափ պարզեցնում են և թեթևացնում ռադիո լսողի համար աբոնեմենտային վճարի մուծումը։

Նախ՝ տրանսլյացիոն կետերից ոգտվելու աբոնեմենտային վճարն այս տարի ընդունվելու է ոչ թե 6 ամիսը մեկ անգամ, այլ ամեն ամիս։

ՑԵՐԿՐՈՐԴ՝ կետի տեխնիկական սպասարկման և ռադիո ունկնդրման վճարն ընդունելու չեն վոչ թե առանձին-առանձին, այլ միասին։ Անցյալ տարի ռադիո լսողը պետք է իր տրանսլյացիոն հանդույցը մուծեր տեխնիկական սպասարկման վճարը, բացի դրանից, նա պետք է գներ փոստի գրասենյակից աբոնեմենտային քարտ և այդպիսով մուծեր ռադիո ունկնդրման վճարը։

ԱՅՍ ՏԱՐԻ ՏՐԱՆՍԼՅԱՑԻՈՆ ԿԵՏԻՑ ՈԳՏՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱԲՈՆԵՄԵՆՏԱՅԻՆ ՔԱՐՏ ՀԱՐԿԱՎՈՐ ՉԵ ԳՆԵԼ։

Նոր կանոնների համաձայն՝ յուրաքանչյուր ռադիո լսող վճարը մուծում է ամեն ամիս, մի ամիս առաջ, վճարվելիք ամսվա նախորդի 15-ից մինչև 20-ը։ Այդ վճարները հարկավոր է մուծել իր տրանսլյացիոն հանդույցը, որը պարտավոր է անդորրագիր տալ ռադիո լսողին՝ դրամներն ստանալու վերաբերյալ։

Նոր որենքի հրապարակման ուշացման պատճառով՝ 1934 թվի առաջին մուծումը յուրաքանչյուր ռադիո լսող կատարում է մի-քանի ամսվա համար, որոնք արդեն անցել են, սկսած 1934 թվի հունվարի 1-ից, իսկ հետագա մուծումները կատարվում են ամեն ամիս, ինչպես ասվեց վերևում։

Իհարկե, պարտադիր չէ, որ վճարը մուծվի անպայման ամիսը մեկ անգամ։ Վճա-

ը կարելի է մուծել միանվագ՝ կես տարվա և նույնիսկ մեկ տարվա համար։ Այդպես վարվելով՝ ռադիո լսողն իրեն ազատում է հաճախակի ռադիո հանդույցը գնալու անհրաժեշտությունից և խնայում է իր ժամանակը։

ԼԱՄՊԱՅԻՆ ՅԵՎ ԴԵՂԵԿՏՈՐԱՅԻՆ ԸՆԴՈՒՆԻՉՆԵՐԻ ԳԾՈՎ

1934 թվին լամպային և դեղեկտորային ընդունիչներից ոգտվելու վճարը մուծելիս՝ պետք է նկատի ունենալ հետևյալը.—

Նոր որենքի համաձայն՝ լամպային ընդունիչների աբոնեմենտային վճարը սահմանված է տարեկան 24 ռուբլի, անկախ նրանից, թե ընդունիչը վո՞րտեղից է ստանում սնուցումը, մարտկոցների՞ց, (батарея) ակումուլյատորների՞ց, թե՞ էլեկտրական ցանցից։

1934 թ. առաջին կիսամյակի լամպային և դեղեկտորային ընդունիչների վճարը պետք է մուծվի առաջին մուծման ժամանակ և համենայն դեպս վոչ ուշ, քան մինչև մայիսի վերջը։ Հետագայում վճարը գանձվելու է ըստ կվարտալների, այսինքն՝ 3 ամիսը մեկ անգամ։

Առաջին մուծման ժամանակ ռադիո լսողը գնում է աբոնեմենտային քարտ։ Հետագա-(կվարտալային) վճարումները ռադիո լսողների կողմից կատարվում են հատուկ ռադիո մարկաներ գնելու և քարտի վրա կպցնելու միջոցով։ Այդ մարկաները մոտ ապագայում բաց են թողնվելու Կապի ժողկոմատի կողմից և վաճառվելու են բոլոր փոստային ձեռնարկներում և հիմնարկներում։

ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ 1934 Թ. ՄԱՐՏԻ 27-Ի № 656 ՎՈՐՈՇՈՒՄԸ

Տրանսլյացիոն ռադիո հանգույցների, տրանսլյացիոն ռադիո կետերի և ռադիո ընդունիչների մասին

ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը վորոշում է.

1. Բոլոր հիմնարկները, ձեռնարկությունները, կազմակերպությունները և քաղաքացիները ԽՍՀ միության սահմաններում իրավունք ունեն սարքավորելու լամպային և դեղեկտորային ռադիո ընդունիչներ ու տրանսլյացիոն կետեր։

2. Կապի Ժողովրդական Կոմիսարիատից կամ նրա տեղական մարմիններից նախորոք թույլտվություն ստանալը պահանջվում է հետևյալ սարքավորումների համար.

ա) ԽՍՀ Միության սահմաններում գտնվող ոտարահպատակ քաղաքացիների և ոտար-

երկրյա հիմնարկների ու ձեռնարկների կողմից սարքավորվող լամպային և դեղեկտորային ռադիո ընդունիչների համար և

բ) ԽՍՀ Միության ցամաքային կամ ծովային սահմանից 100 կիլոմետրի վրա գտնվող գոտու սահմաններում յեղած լամպային և դեղեկտորային ռադիո ընդունիչների համար:

Ծանոթություն.— Ոտարերկրյա պետությունների դիվանագիտական ներկայացուցիչները, դիվանագիտական ներկայացուցիչների անդամները և հյուպատոսական ներկայացուցիչները սույն հոդվածում նշված՝ Կապի Ժողկոմատի թույլտվությունն ստանում են Արտաքին Գործերի Ժողովրդական Կոմիսարիատի միջոցով:

3. Տրանսլյացիոն հանդույցների սարքավորումը և շահագործման հանձնելը թույլատրվում է միմիայն Կապի Ժողկոմատի տեղական մարմինների նախորոք թույլտվությունն ստանալուց հետո:

Ծանոթություն.— Հոդ. 2-ի «բ» կետը և հոդ. 3-ը չեն տարածվում հատուկ նշանակություն ունեցող ռադիո ընդունիչների և տրանսլյացիոն հանդույցների վրա, վորոնք գտնվում են Ռազմա-Ծովային Ժողկոմատի, Միացյալ Պետքաղվարչության, Հաղորդակցության Ճանապարհների Ժողկոմատի, Ջրային Ժողկոմատի, Հյուսիսային Ծովային Ճանապարհի Գլխավոր Վարչության և Քաղաքացիական ոդային Նավատորմի Գլխավոր վարչության վարույթում:

Այդ ռադիո հանդույցների կառուցման ժամանակ տեղադրությունը և գլխավոր տեխնիկական տվյալները Կապի Ժողկոմատի կողմից նախորոք համաձայնեցվում են հիշյալ գերատեսչությունների հետ:

4. Տրանսլյացիոն ռադիո հանդույցների, տրանսլյացիոն ռադիո կետերի և ընդունիչների սարքավորման ու շահագործման ժամանակ պետք է պահպանվեն Կապի Ժողովրդական Կոմիսարիատի կողմից հրատարակվող կանոնները, ինչպես նաև անվտանգության և բարեկարգության կանոնները, վոր հրատարակվում են սահմանված կարգով:

Տրանսլյացիոն ռադիո հանդույցների, տրանսլյացիոն ռադիո կետերի և ռադիո ընդունիչների տերերը պարտավոր են անարգել կերպով թույլատրել Կապի Ժողկոմատի վերահսկիչներին հետազոտելու այդ սարքավորումները և նրանց ոժանդակ պիտույքները, ինչպես նաև ստուգելու հարկ յեղած դեպքում թույլտվության և ցուցակագրման փաստաթղթերը:

6. Կապի Ժողկոմատը և նրա տեղական մարմինները կարող են արգելել տրանսլյացիոն ռադիո հանդույցների շահագործումը, ում և վոր պատկանելիս լինեն նրանք, յեթե այդ ռադիո հանդույցների սարքավորման և նրանց շահագործման ժամանակ կատարվել են Կապի Ժողկոմատի տեխնիկական կանոնները:

7. Բոլոր տրանսլյացիոն հանդույցները, տրանսլյացիոն կետերը և ռադիո ընդունիչնե-

ը յենթակա յեն պարտադիր ցուցակագրման Կապի Ժողկոմատի տեղական մարմիններում Կապի Ժողովրդական Կոմիսարիատի կողմից սահմանված կարգով:

8. Կապի Ժողովրդական Կոմիսարիատը կարող է տրանսլյացիոն ռադիո հանգույցների առանձին կատեգորիաներին ազատել սարքավորելու և գործարկելու համար պահանջվող նախնական թույլտվությունն ստանալուց ինչպես նաև ցուցակագրվելուց:

9. Կապի Ժողկոմատը կարող է տրանսլյացիոն ռադիո հանգույցների տերերից դանձել հատուկ վճար այդ ռադիո հանգույցների ցուցակագրման, թույլտվության վկայականներ տալու, տեխնիկական վերահսկողության և Կապի Ժողկոմատի կողմից կիրառվող այլ գործողությունների համար:

Այդ գործողությունների թվարկումը և նրանց վճարի չափերը սահմանվում են Կապի Ժողովրդական Կոմիսարիատի կողմից՝ համաձայնեցնելով ԽՍՀ Մխության Ֆինժողկոմատի հետ:

10. Տրանսլյացիոն ռադիո հանգույցների տերերից Համամիութենական Ռադիո Կոմիտեյի ոգտին դանձվում է ռադիո հաղորդումների ընդունման համար արոնեմենտային վճար՝ հետեվյալ չափերով.—

ա) Մինչև 10 վատտ (ներառյալ) անվանական յելքային կարողություն (номинальная выходная мощность) ունեցող կոլեկտիվ ոգտագործման տրանսլյացիոն ռադիո հանգույցների համար՝ (ուսումնական հիմնարկներ, խոշոր ճիթ-ընթերցարաններ, հանրակացարաններ, մանկատներ, հիվանդանոցներ, ուղղիչ տներ, մսուրներ, սանատորիաներ և այլն) տարեկան 36 ռուբլի,

բ) մինչև 10 վատտ (ներառյալ) անվանական յելքային կարողություն ունեցող հասարակական ոգտագործման և արտադրական ըստ պատվերների տրանսլյացիոն ռադիո հանգույցների համար (ակումբներ, կուլտուրայի և հանդեսների պարկեր, այգիներ, սպորտ հրապարակներ, ճաշարաններ, հյուրանոցներ, ճամբարներ, կայարաններ, տուրիստական բազաներ, դյուղացու և կոլտնտեսականի տներ, գործարաններ, մեքենատրակտորային կայաններ, կոլտնտեսություններ, խորհտնտեսություններ, դյուղխորհուրդներ և այլն)— տարեկան 50 ռուբլի,

գ) 51-ից մինչև 200 վատտ (ներառյալ» անվանական յելքային կարողություն ունեցող տրանսլյացիոն հանգույցների համար, անկախ նրանից թե ում են սպասարկում, տարեկան 100 ռուբլի:

դ) 51-ից մինչև 200 վատտ (ներառյալ) անվանական յելքային կարողություն ունեցող տրանսլյացիոն ռադիո հանգույցների հա-

մար, անկախ նրանից, թե ում են սպասարկում, տարեկան 300 բուբլի:

ե) 201–ից մինչև 500 վատտ (ներառյալ) անվանական յելքային կարողություն ունեցող տրանսլյացիոն ռադիո հանգույցների համար, անկախ նրանից, թե ում են սպասարկում, տարեկան 500 ռուբլի:

զ) 500–ից ավելի վատտ անվանական յելքային կարողություն ունեցող տրանսլյացիոն ռադիո հանգույցների համար, անկախ նրանից թե ում են սպասարկում, տարեկան 750 ռուբլի:

11. Ռադիո հաղորդումն ընդունելու իրավունքի աբոնեմենտային վճարից ազատվում են՝

ա) այն տրանսլյացիոն ռադիո հանգույցները, վորոնք սպասարկում են միմիայն արտադրության կամ տեղական ինֆորմացիային և չեն զբաղվում ռադիո հաղորդման տրանսլյացիայով (կայարանների սարքավորումները,—ուղևորներին ինֆորմացիա տալու համար,– խանութների ռեկլամային սարքավորումները, հրդեհի ազդանշանները, արտադրական ցեխային կապը և այլն):

բ) այն տրանսլյացիոն ռադիո հանգույցները, վորոնք սպասարկում են միմիայն այն աբոնենտներին, վորոնցից աբոնեմենտային վճարը գանձվում է 14 և 15 հոդվածների համաձայն.

12. Տրանսլյացիոն ռադիո կետերի տերերից գանձվում է՝

ա) սարքավորման վճարը,

բ) աբոնեմենտային վճարը (տեխնիկական սպասարկման և ռադիո ունկնդրման համար):

13. Կապի Ժողկոմատի տրանսլյացիոն ռադիո հանգույցների տանսլյացիոն ռադիո կետերի սարքավորման վճարի չափերը սահմանում է Կապի Ժողկոմատը, համաձայնեցնելով ԽՍՀՄ Ֆինժողկոմատի հետ:

Այլ դերատեսչությունների և կազմակերպությունների տրանսլյացիոն ռադիո հանգույցների տրանսլյացիոն ռադիո կետերի սարքավորման վճարի չափերը սահմանում են համապատասխան հանգույցների տերերը, համաձայնեցնելով Համամիութենական ռադիո Կոմիտեի կամ նրա տեղական մարմինների հետ:

Սարքավորման վճարն ստացվում է հոդուտ համապատասխան տրանսլյացիոն ռադիո հանգույցների տերերի:

14. Կապի Ժողկոմատի տանսլյացիոն հանգույցների տրանսլյացիոն կետերի աբոնեմենտային վճարի չափերը սահմանում է Կապի Ժողովրդական Կոմիսարիատը, համաձայնեցնելով ԽՍՀՄ Ֆինժողկոմատի և Համամիութենական Ռադիո Կոմիտեի հետ և դիֆերենցիացիայի յենթարկելով ըստ ԽՍՀ Միության տերիտորիայի զանազան գո-

տների ու աբոնենտների զանազան կատեգորիաների, այն հաշվով, որ աբոնեմենտային վճարի չափերը Միության մեջ միջին հաշվով կազմեն տարեկան 36 ռուբլի յուրաքանչյուր ռադիո կետի համար:

Այդ տրանսլյացիոն ռադիո կետերի համար ստացված աբոնեմենտային վճարը բաշխվում է հետևյալ կերպ.

Չերկու յերրորդ մասը տրվում է Կապի Ժողկոմատին (տեխնիկական սպասարկման համար) և մեկ յերրորդը՝ Համամիութենական Ռադիո Կոմիտեյին (ռադիո հաղորդման համար):

15. Այլ գերատեսչությունների և կազմակերպությունների ռադիո հանգույցների տրանսլյացիոն ռադիո կետերի աբոնեմենտային վճարը սահմանվում է համապատասխան ռադիո հանգույցների տերերի կողմից, տարեկան 36 ռուբլուց վոչ ավելի, այն հաշվով, որ յուրաքանչյուր ռադիո կետից 12 ռուբլին ստացվի Համամիութենական Ռադիո Կոմիտեյի ոգտին, իսկ մնացած գումարը՝ համապատասխան տրանսլյացիոն հանգույցի տիրոջ ոգտին:

16. Լամպային և դեղեկտորային ռադիո ընդունիչների տերերից գանձվում է աբոնեմենտային վճար հոգուտ Համամիութենական Ռադիո Կոմիտեյի՝ հետևյալ չափերով.—

ա) Դեղեկտորային ռադիո ընդունիչի համար՝ տարեկան 3 ռուբլի:

բ) անհատական ոգտագործման լամպային ռադիո ընդունիչի համար՝ տարեկան 24 ռուբլի,

գ) Կոլեկտիվ ոգտագործման լամպային ռադիո ընդունիչի համար՝ տարեկան 36 ռուբլի,

դ) հասարակական ոգտագործման լամպային ռադիո ընդունիչի համար՝ (առանց տրանսլյացիոն ռադիո հանգույցի) տարեկան 50 ռուբլի:

17. Բոլոր ռադիո ընդունիչներից աբոնեմենտային վճարը գանձվում է անկախ այն հանգամանքից, թե ապահովված են սարքավորումները սնուցման աղբյուրներով:

18. Կապի Ժողկոմատի տեղական մարմինների վրա դրվում է վճարների գանձման գործը և ժամանակին մուծելու վերահսկողությունը:

ա) Կապի Ժողկոմատի տրանսլյացիոն ռադիո հանգույցների տրանսլյացիոն ռադիո կետերի սարքավորման և աբոնեմենտային վճարը,

բ) այլ գերատեսչությունների և կազմակերպությունների տրանսլյացիոն ռադիո հանգույցների տրանսլյացիոն ռադիո կետերի

աբոնեմենտային վճարի այն մասը, որը մուտք է արվում հոդուտ Համամիութենական Ռադիո Կոմիտեի,

գ) Տրանսլյացիոն ռադիո հանդուցյալների տերերից գանձվող աբոնեմենտային վճարը,

դ) Լամպային և գեղեկտորային ռադիո ընդունիչների աբոնեմենտային վճարը:

19. Սարքավորման և աբոնեմենտային վճարի, մուծման կարգը և ժամկետները սահմանում է Կապի Ժողովրդական Կոմիսարիատը, համաձայնեցնելով ԽՍՀ Միության Ֆինժողկոմատի և Համամիութենական Ռադիո Կոմիտեի հետ:

20. Այն ծառայությունների համար, որը մատուցում են Կապի Ժողկոմատի մարմինները Համամիութենական Ռադիո Կոմիտեին՝ նրա ոգտին աբոնեմենտային վճար գանձելու գծով, Կապի Ժողկոմատի մարմինները հոդուտ իրենց պահում են 7 տոկոս այն գումարներից, որոնք տրվելու են Համամիութենական Ռադիո Կոմիտեին:

21. Աբոնեմենտային վճարը սահմանված ժամկետներում չմուծելու, ինչպես և այդ վճարը համապատասխան տարիֆային կատեգորիայով չմուծելու համար սահմանվում է տուգանք կիսամյա աբոնեմենտային վճարի չափով՝ համապատասխան տիպի ռադիո սարքավորման համար:

Աբոնեմենտային վճարը չմուծելու համար սահմանվող տուգանքը գանձվում է ռադիոյի սարքավորման որից 15 որ անցնելուց հետո, կամ սկսած այն որվանից, յերբ վերջանում է նախորդ ժամանակաշրջանը, որի համար մուծված է յեղել աբոնեմենտային վճարը:

22. Տուգանքը չվճարելու դեպքում այդպիսին գանձվում է Կապի Ժողկոմատի մարմինների կողմից անվիճելի կարգով, կիրառելով գանձման հարկադրական միջոցները, որը նախատեսված են 1834 թ. սեպտեմբերի 17-ի կանոնադրության մեջ՝ հարկերի և վոչ հարկային վճարումների գանձման մասին (ԽՍՀ Միության Որենքների ժողովածու, 1932 թ. № 68, հոդ. 410):

23. Աբոնեմենտային վճարը չմուծելու համար գանձվող տուգանքներից փաստորեն ստացվող գումարները բաշխվում են հետևյալ կերպ.

ա) 20 տոկոսը վարձատրության ձևով վճարվում է այն կազմակերպությանը կամ անձնավորությանը, որը հայտարերել և և ցույց տվել Կապի Ժողկոմատի մարմիններին այնպիսի ռադիո սարքավորում, որի աբոնեմենտային վճարը չի մուծված ժամանակին կամ մուծված է անհամապատասխան կատեգորիայով:

բ) 40 տոկոսը տրվում է տեղական տրանսլյացիոն ռադիո հանդուցյին՝ շրջանի ռադիոֆիկացիայի միջոցների ուժեղացման համար:

գ) 40 տոկոսը տրվում է տեղական տրանսլյացիոն ռադիո հանգույցին՝ ռադիո հաղորդման բարելավման համար:

24. Սույն վորոշման վերաբերյալ հրահանգները հրատարակվում են Կապի Ժողկոմատի կողմից:

Այդ հրահանգներում մասնավորապես պետք է նախատեսված լինի տնային վարչությունների, տնատերերի և կապալառուների, իսկ գյուղական վայրերում՝ գյուղխորհուրդների պարտականությունը՝ ստուգել թույլտվության և ցուցակագրման փաստաթղթերն այն դեպքերում, յերբ պահանջվում է թույլտվություն կամ ցուցակագրություն:

25. Սույն վորոշումը, ինչպես նաև սույն վորոշման հիման վրա՝ Կապի Ժողկոմատի կողմից հրատարակվող հրահանգները խախտողները պատասխանատվություն են կրում՝ համաձայն Միութենական հանրապետությունների որենսդրության:

26. Ջեղյալ համարել ԽՍՀ Միության հետեվյալ որենքները.—

ա) ԽՍՀՄ Ժողկոմխորհի 1931 թվի հունվարի 27-ի վորոշումը՝ ռադիո սարքավորումների և տրանսլյացիոն կառուցումների մասին (ԽՍՀՄ Ո.Ժ. 1931 թ. №6, հոդ. 78, № 31, հոդ. 361. 1932 թ. № 69, հոդ. 416, 1933 թ. № 41, հոդ, 499 բացառությամբ այն մասերի, վորոնք վերաբերում են հաղորդող ռադիո կայաններին.

բ) ԽՍՀՄ Ժողկոմխորհի 1933 թ. մարտի 7-ի վորոշումը՝ ռադիո ունկնդրման ընդունիչներից ոգտվելու համար արոնեմենտային վճար սահմանելու մասին (ԽՍՀՄ Ո.Ժ., 1933 թ. № 18, հոդ. 104).

գ) ԽՍՀՄ Ժողկոմխորհի 1933 թ. մայիսի 25-ի վորոշումը՝ ռադիո ունկնդրման ընդունիչներից ոգտվելու արոնեմենտային վճարը սահմանված ժամկետներում չմուծելու համար դանձվող տուգանքների մասին (ԽՍՀՄ Ո.Ժ. № 34, հոդ. 204):

27. ԽՍՀՄ Ժողկոմխորհի 1932 թ. հունվարի 17-ի վորոշման մեջ՝ կապի դրության մասին՝ 14-րդ հոդվածի «բ» կետից (ԽՍՀՄ Ո.Ժ. 1932 թ. №՝, հոդ. 40 և 1933 թ. № 42, հոդ 2499 արոնեմենտային վճար խոսքերից հետո հանել «տեխնիկական սպասարկման համար» խոսքերը:

28. Սույն վորոշումը կիրառել 1934 թ. հունվարի 1-ից:

ԽՍՀՄ Միության Ժողովրդական կոմիսարների Խորհրդի նախագահի տեղակալ՝ Վ. Կույբիշեվ

ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի գործերի կառավարիչ՝ Ի. Միրոշնիկով

ՎՈՐՈՇՈՒՄ № 87

ԽՍՀՄ ԺՈՂԿՈՄԽՈՐՀԻՆ ԿԻՑ ՌԱԴԻՈՖԻԿԱՑԻԱՅԻ ՅԵՎ ՌԱԴԻՈ ՀԱՂՈՐԴՄԱՆ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՅԻ

1934 թ. ապրիլի 15-ին

Ռադիո ունկնդրման աբոնեմենտային վճարի գանձման գծով ձեռք բերած լավագույն նվաճումների համար առանձնացվող պարգևատրման ֆոնդի մասին

ԽՍՀՄ Ժողկոմխորհին կից Ռադիոֆիկացիայի և Ռադիո Հաղորդման Համամիութենական Կոմիտեն վորոշում են.

1. Նպատակ ունենալով առաջ մղել Ռադիո կոմիտեները և ռադիո հանդուցները, ինչպես նաև Կապի ձեռնարկների աշխատողներին՝ 1934 թ. ռադիո ունկնդրման աբոնեմենտային վճարի գանձման կոնտրոլ առաջադրանքների կատարման և գերակատարման գործում, առանձնացնել պարգևատրման համար ֆոնդ 75·000 ռուբլու չափով:

2. Նշված ֆոնդից Համ. Ռադիո Կոմիտեյի հաշվին պարգևատրման են յենթակա նամակատարները, դրքատարները, Կապի շրջանային բաժինների վարիչները, կոմյերիտական, պրոֆմիութենական և այլ հասարակական կազմակերպությունները, ինչպես նաև Համ. Ռադիո Կոմիտեյի, ռադիո կոմիտեների և Կապի Վարչության այն աշխատողները, վորոնք տվել են քանակական և վորակական լավագույն ցուցանիշներ՝ գանձման գործի կազմակերպման, մասսայական – բացատրական աշխատանքի, վերահսկողության մեջ և աբոնեմենտային վճարի գանձման աշխատանքներում անմիջական մասնակցություն ունենալու գործում:

3. Պարգևատրությունը կատարվում է Ռադիո կոմիտեների, Կապի Վարչությունների աշխատողների և հասարակայնության առանձին խմբերի համար սահմանված հատուկ ցուցանիշների հիման վրա (տես հավելված № 1).

4. Պարգևատրությունը կատարում են կամ անմիջականորեն կենտրոնը կամ տեղական Ռադիո Կոմիտեները՝ Համ. Ռադիո Կոմիտեյի կողմից առանձնացվող գումարների հաշվին և կախված են առանձին յերկրներում, հանրապետություններում և մարզերում տարվող աբոնեմենտային վճարի գանձման աշխատանքի հաջողությունից:

5. Համ. Ռադիո Կոմիտեյի սիստեմից դուրս գտնվող այլ հիմնարկների կամ կազմակերպությունների աշխատողներին պարգևատրելու ժամանակ պահանջվում է պաբտագիր

գրավոր համաձայնություն համապատասխան հիմնարկի կամ կազմակերպության ղեկավարի կողմից։

ԽՍՀՄ Ժողկոմխորհին կից՝ Ռադիոֆիկացիայի և Ռադիո Հաղորդման Կոմիտեի նախագահ՝ Կերժենցև

ԽՍՀՄ Ժողկոմխորհին կից՝ Համ. Ռադիո Կոմիտեի պատասխանատու քարտուղարի ժամ. պաշտոնակատար՝ Կվետենովսկի

„ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ"
Համ. Ռադիո Կոմիտեի նախագահ՝ ԿԵՐԺԵՆՑԵՎ
1934 թ. 15 ապրիլի։

ՀԱՎԵԼՎԱԾ № 1
Համ. Ռադիո Կոմիտեի 1934 թ. ապրիլի 15-ի № 87 վարոշման

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Կապի, հասարակական կազմակերպությունների և Ռադիո Կոմիտեների աշխատողների պարգևատրման՝ ռադիո ունկնդրման ամբոնեմենտային վճարի գանձման գործում ձեռք բերած լավագույն վճարումների համար

1. ՆԱՄԱԿԱՏԱՐՆԵՐԻ, ՌԱԴԻՈ ՀԱՆԴՈՒՑՑՆԵՐԻ ՄՈՆՏՑՈՐՆԵՐԻ ՑԵՎ ԱՑԼ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ, ՎՈՐՈՆՔ ԱՆՄԻՋԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՑՈՒՆ ՈՒՆԵՆ ԼԱՄՊԱՑԻՆ ՑԵՎ ԴԵԴԵԿՏՈՐԱՑԻՆ ԸՆԴՈՒՆԻՉՆԵՐԻ ԱԲՈՆԵՄԵՆՏԱՑԻՆ ՔԱՐՏԵՐԻ ՏԱՐԱԾՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ.

ա) Ռայոնի ռադիո լսողների մեջ աբոնեմենտային քարտեր տարածելու կոնտրոլ թվերի կատարումը.

բ) Կոնտրոլ առաջադրանքը ժամկետից շուտ կատարելը.

գ) Բնակվարձկոոպ Ընկերություններին, Բանվորական Բնակշինկոոպ Ընկերություններին, տների կառավարիչներին, տների և հանրակացարանների պարետներին չցուցակագրը-

ված լամպային և դեղեկտրային սարքավորումները հայտաբերելու աշխատանքի մեջ ներգրավելը.

դ) Հայտաբերվող չցուցակագրված լամպային և դեղեկտորային սարքավորումների հաշվին կոնտրոլ առաջադրանքների դերակատարումը:

2. ՏՐԱՆՍԼՅԱՑԻՈՆ ՀԱՆԳՈՒՅՑՆԵՐԻ ՎԱՐԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ա) Ռադիո լսողների հաշվառման ռացիոնալ դրվածքը, վորը հնարավորություն է տալիս արագ կերպով հայտաբերելու աբոնեմենտային վարձը չվճարողներին, այն անձանց, վորոնք ժամանակին չեն կատարել մուծումը.

բ) Աբոնեմենտային վճարի գանձման դրծով հանգույցի մոնտյորներին և հաշվային աշխատողներին կազմակերպելը.

գ) Իր հանգույցի ռադիո կետերի կարգավորումը 100 տոկոսով.

դ) Աբոնեմենտային վճարի գանձման կոնտրոլ առաջադրանքի կատարումը 100 տոկոսով:

ե) Աբոնեմենտային վճարից հավաքված գումարների ժամանակին փոխանցումը Կապի մարմինների հաշվին, համաձայն Կապի Ժողկոմատի հրահանգի:

3. ԿԱՊԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ ՎԱՐԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ա) Մասսայական- բացատրական աշխատանքի կազմակերպումը Կապի աշխատողների

մեջ՝ յեթերային ռադիո սարքավորումների աբոնեմենտային վճարի գանձման նպատակների և մեթոդների մասին.

բ) իր ռայոնի տրանսլյացիոն հանգույցների իրական վերահսկողության կազմակերպումը տրանսլյացիոն կետերի աբոնեմենտային վճարի գանձման աշխատանքներում:

գ) Հսկողություն և ստուգում տրանսլյացիոն կետերի բոլոր տերերին առանց բացառության ընդգրկելու ռադիո ունկնդրման աբոնեմենտային վճարի գանձման գործում 100 տոկոսով, համաձայն տրանսլյացիոն հանդույցում յեղած ցուցակների.

դ) հսկողություն տրանսլյացիոն հանդույցների աշխատանքի վրա՝ տրանսլյացիոն կետերի ռացիոնալ հաշվառումը տանելու գործում.

ե) կոնտրոլ առաջադրանքը ժամկետից առաջ կատարելը և դերակատարելը.

զ) հսկողություն փոստային ձեռնարկների և տրանսլյացիոն հանգույցների աշխատանքի վրա՝ աբոնեմենտային վճարից հավաքված գումարները ժամանակին շրջան փոխադրելու գործում.

է) դրամական միջոցների փոխադրումը շրջանից մարզ՝ ժամանակին և սահմանված ժամկետում.

ը) յեթերային ռադիո սարքավորումների քարտերի արմատների ժամանակին առաքումը

Ռադիո Կոմիտեներին՝ համաձայն Կապի Ժողկոմատի հրահանգի։

4. ԿԱՊԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ա) Յեթերային ընդունիչների, տրանսլյացիոն հանգույցների և տրանսլյացիոն կետերի աբոնեմենտային վճարի գանձման աշխատանքի ցուցադրական կազմակերպումը և դրվածքը։

բ) աբոնեմենտային վճարի գանձման կոնտրոլ առաջադրանքի կատարում և գերակատարումը։

գ) շրջաններում հավաքված գումարների ժամանակին կենտրոնացումը և 100 տոկոսով փոխանցումը Մոսկվա՝ Համ. Ռադիո Կոմիտեի հաշվարկային հաշվին, Կապի Ժողկոմատի հրահանգով սահմանված ժամկետներում։

5. ՀԱՄ. ԼԿՅԵՄ-ԻՆ ԿԻՑ ՌԱԴԻՈ ԿՈՄԻՏԵՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ա) Առավել մեծ քանակությամբ Թելթել հեծելազորների ակտիվ աշխատող բրիգադների կազմակերպումը՝ ոժանդակելու Կապի Վարչություններին, Կապի շրջանային բաժինների վարիչներին և տրանսլյացիոն հանգույցներին՝ աբոնեմենտային վճարի գանձման ժամանակ։

բ) սոցմրցման կազմակերպումը և անցկացումը կոմյերիտմիության շրջանային կազմակերպությունների մեջ՝ աբոնեմենտային վճարի գանձման դծով։

գ) Կոմյերիտական վերահսկիչ բրիգադների կազմակերպումը և յեթերային ընդունիչների ու տրանսլյացիոն կետերի աբոնեմենտային վճարի մուծման վերահսկողության չավադուն անցկացումը։

դ) աբոնեմենտային վճարի գանձման դծով ռադիո լսողների կոնֆերանսների կազմակերպումն ու լավագույն անցկացումը և պայքար տրանսլյացիոն կետերի մաղումների դեմ։

6. ՌԱԴԻՈ ԿՈՄԻՏԵՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ա) Տանել լայն մասսայական-բացատրական աշխատանք աբոնեմենտային վճարի գանձման նպատակների, աշխատանքի մեթոդների և վերահսկողության մասին։

բ) կազմակերպել ամենալայն ոժանդակություն Կապի ձեռնարկներին՝ վերջիններիս կողմից աբոնեմենտային վճար գանձելու գործում։

գ) իրագործել հավաքված գումարները Կապի Վարչության հաշվից Համ. Ռադիո Կոմիտեի հաշվին ժամանակին փոխանցելու վերահսկողությունը։

դ) ռացիոնալացման բնագավառում աբոնեմենտային վճարի գանձման լավագույն անցկացում, հաշվառման տեխնիկայի, վերահսկողության պարզեցումները և այլն։

ե) ժամանակին կենտրոնացնել Ռադիո

Կոմիտեյում յեթերային սարքավորումների աբոնեմենտային քարտերի արմատները, ժամանակին կատարել աբոնեմենտային քարտերի արմատների վիճակագրական մշակումը, համաձայն Համ. Ռադիո Կոմիտեյի հրահանգի:

ԽՍՀՄ Ժողկոմխորհին կից Ռադիոֆիկացիայի և Ռադիո Հաղորդման Համամիութենական Կոմիտեյի պատ. քարտուղարի ժամանակավոր պաշտոնակատար՝ Կվետենեվսկի

9/5—4
ՀԱՄՏԱՏՈՒՄ ԵՄ
Կապի Ժողովրդական Կոմիսար Ա. Ի. ՌԻԿՈՎ
4/4
ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ Ե.—
ՀԱՄ. Ռ. Կ. Ն. ԿԵՐԺԵՆՑԵՎ
ՀԱՄԿԽ ՈՐՈՒԻՆ
Ֆ Ժ Կ ԻՎԱՆՈՎ

ԿԱՆՈՆՆԵՐ

ՌԱԴԻՈ ԸՆԴՈՒՆԻՉՆԵՐԻՑ, ՏՐԱՆՍԼՅԱՑԻՈՆ ՌԱԴԻՈ ՀԱՆԳՈՒՅՑՆԵՐԻՑ ՅԵՎ ՏՐԱՆՍԼՅԱՑԻՈՆ ՌԱԴԻՈ ԿԵՏԵՐԻՑ ՈԳՏՎԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ.

ՀԱՏՎԱԾ I

ՅԵԹԵՐՈՎ ԸՆԴՈՒՆՈՂ ՌԱԴԻՈ ԸՆԴՈՒՆԻՉՆԵՐ

1. Բոլոր հիմնարկությունները, կազմակերպությունները, ձեռնարկությունները և առանձին անհատները, վորոնք իրենց մոտ սարքավորել են յեթերով լսելու ռադիո ընդունիչներ, պարտավոր են մուծել աբոնեմենտային վճար՝ ռադիո հաղորդումները լսելու համար:

Ծանոթություն.— Ռադիո ունկնդրման աբոնեմենտային վճարը մուծվում է՝ անկախ այն հանգամանքից, թե ապահովվա՞ծ են ռադիո ընդունիչները սնուցման աղբյուրներով (питания):

2. Անհատական ոգտագործման ռադիո ընդունիչները սնուցման աղբյուրներով, լամպերով և այլն ապահովվելու մասին հոգում են իրենք՝ տերերը, վորոնք ձեռք են բերում այդպիսիներն ապրանքատար սիստեմի (կոոպերացիա, պետառևտուր) միջոցով:

Կոլեկտիվ ոգտագործման ռադիո ընդունիչների տերերը (խրճիթ-ընթերցարաններ, դյուղացու տներ, ՄՏԿ-ներ, խորհտնտեսություններ, կոլտնտեսություններ և այլն) կարող են պայմանագրեր կնքել ռադիո հանգույցների հետ, սնուցման աղբյուրների մատակարարման և իրենց ռադիո ընդունիչների տեխնիկական հսկողության վերաբերյալ՝ հատուկ վճարով, վոր հիշատակվում են պայմանագրերի մեջ-

2. Ցուրաքանչյուր ռադիո ընդունիչի համար սահմանվող աբոնեմենտային վճարի տարիքը հաստատված է ԽՍՀՄ ԺԿԽ-ի 1934 թ. մարտի 27-ի № 656 վորոշմամբ, մի տարվա համար, հետեվյալ չափերով.—

ա) Դեդեկտորային ընդունիչի համար 3 ռ.

բ) Անհատական ոգտագործման լամպային ընդունիչի համար . . . . . 24 ռ.

գ) Կոլեկտիվ ոգտագործման լամպային ընդունիչի համար (առանց հանգույցի, այսինքն՝ առանց ուժեղացնող սարքավորման . . . . . 36 ռ.
(խրճիթ-ընթերցարաններ, դպրոցներ, բանվորական և ուսանողական հանրակացարաններ, ուսումնական հիմնարկներ, կարմիր անկյուններ և այլն):

դ) Հասարակական - հանրային ոգտագործման լամպային ընդունիչի համար (առանց հանգույցի, այսինքն՝ առանց ուժեղացնող սարքավորման) . . . . . 50 ռ.
(ակումբներ, հանդստի և կուլտուրայի պարկեր, սպորտ հրապարակներ, կայարաններ, ճաշարաններ, կինոներ, հյուրանոցներ, դյուղացու տներ, տուրիստական բազաներ, կոլտնտեսական շուկաներ և այլն):

3. Ռադիո ընդունիչի տերը աբոնեմենտային քարտը գնում է տարին մեկ անգամ՝ փոստային ճեռնարկներից կամ նամակատարներից և այդպիսով վճարում ռադիո ունկնդրման վարձը 3 ամիս (1կվարտալ) առաջ, սկսած այն ամսի մեկից, յերբ սարքավորվել է ռադիո ընդունիչը. իսկ հետագայում աբոնեմենտային վճարը մուծվում է փոստային ճեռնարկներից համապատասխան արժեքի հատուկ ռադիո մարկաներ գնելու միջոցով, վորոնք կպցնում են վկայականի մյուս յերեսին: Փոստային և այլ տեսակի մարկաներ կպցնելն արգելվում է և հաշվի չի առնվում վորպես վճար:

Աբոնեմենտային վճարը պետք է մուծվի կվարտալներով՝ հետևյալ ժամկետներին.

I կվարտալի վճարը վոչ ուշ, քան հունվարի 15-ը (իսկ 1934 թ. 1-ին կիսամյակի վճարը վոչ ուշ, քան ս/թ. մայիսի 15-ը). II կվարտալի վճարը վոչ ուշ, քան ապրիլի 15-ը, III կվարտալինը վոչ ուշ, քան հուլիսի 15-ը

և IV կվարտալինը վոչ ուշ, քան հոկտեմբերի 15-ը։

Ծանոթություն.— 1934 թ. ապրիլ և մայիս ամիսների մուծումները վճարելիս՝ կառաջնա առաջին կվարտալի աբոնեմենտային վճարի վերահաշվառում, վորով պետք է ապահովվի բոլոր մուծումների մուտքն սույն կանոններով նշված տարիքներով, սկսած 1934 թ. հունվարի մեկից։

2. Այն անձինք, վորոնք ոգտվում են սույն կանոնների 3-րդ հատվածի § 18-ում հիշված արտոնություններով, քարտը դնում են նույն ժամկետում և այդպիսով վճարած են լինում կիսամյա աբոնեմենտային վճարը, իսկ հետագայում աբոնեմենտային վճարը մուծվում է սահմանված կարգով՝ կիսով չափ։

4. Ռադիո ընդունիչի տերը փոստային ձեռնարկից կամ նամակատարից քարտը դնելով՝ պարտավոր է լրացնել այն, գրելով բոլոր անհրաժեշտ տեղեկությունները, և կտրվող մասը նորից հանձնել փոստային ձեռնարկին կամ նամակատարին՝ իր մոտ թողնելով վկայականը, վորի վրա խփված պետք է լինի փոստային ձեռնարկի կնիքը։

5. Վկայականը պահվում է ռադիո ընդունիչի մոտ և տիրոջ կողմից ներկայացվում է Կապի Ժողկոմատի վերահսկիչներին՝ նրանց պահանջի դեպքում։

Ծանոթություն.— Վկայականը կորչելու դեպքում նորը չի տրվում և ռադիո ընդունիչի տերը պարտավոր է դնել նոր քարտ։

2. Կապի Ժողկոմատի և նրա տեղական մարմինների վերահսկիչները պետք է իրենց մոտ ունենան համապատասխան վկայականներ, վորոնք վավերացված պետք է լինեն կնիքով և վկայականը տվող անձնավորության ստորագրությամբ։

6. Մի տիպի ռադիո ընդունիչը մի այլ՝ ավելի բարձր տիպի ռադիո ընդունիչներով փոխարինելու դեպքում (վորի համար ավելի բարձր աբոնեմենտային վճար է պահանջվում), ռադիո ընդունիչի տերը պարտավոր է անհապաղ, սույն կանոնների § 2-ում և § 3-ում սահմանված ընդհանուր կարգով ձեռք բերել այնպիսի աբոնեմենտային քարտ, վոր համապատասխանում է նոր սարքավորված ռադիո ընդունիչին, առանց հաշվի առնելու նախկին սարքավորման համար մուծվող աբոնեմենտային վճարը։

ՀԱՏՎԱԾ II

ՏՐԱՆՍԼՅԱՑԻՈՆ ՌԱԴԻՈ ՀԱՆԳՈՒՅՑՆԵՐԸ ՑԵՎ ՆՐԱՆՑ ՏՐԱՆՍԼՅԱՑԻՈՆ ՌԱԴԻՈ ԿԵՏԵՐԸ

7. Վոչ մի տրանսլյացիոն ռադիո հանդույց, վոր սարքավորված է ուժեղացման միջոցով՝ ռադիո հաղորդումներն ընդունելու և տալու համար նրան միացվող տրանսլյացիոն կետերով, չի կարող շահագործման հանձնվել առանց Կապի Ժողկոմատի շրջանային կամ կենտրոնական քաղաքային ռադիո հանդույցի

տեխնիկի նախորոք թույլատվության և քննության:

Ծանոթություն.— Տեխնիկական քննության համար դանձվում է վճար համաձայն Կապի ժողկոմատի սակագնի:

Տեխնիկական քննությունից հետո ռադիո հանդույցի համար լրացվում է ֆորմուլյար ($\phi^{4}|^{0}_{v}$-Д) և հանդույցը շահագործող կազմակերպությանը տրվում է շահագործման իրավունքի վկայական:

Ծանոթություն.— Նախորոք տրվող թույլտվությունն ստանալուց աղատվում են հատուկ նշանակություն ունեցող ռադիո հանդույցները, վորոնք դտնվում են Ռազմա-ծովային ժողկոմատի, Մթացյալ Պետաքաղվարչության, Հաղորդակցության Ճանապարհների ժողկոմատի, Ջրային ժող կոմատի, Հյուսիսային Ծովային Ճանապարհի Գլխավոր Վարչության և Քաղաքացիական Ոդային Նավատորմի Գլխավոր Վարչության վարույթներում: Այդ հանդույցների կառուցման ժամանակ հանդույցի տեղադրությունը և գլխավոր տեխնիկական տվյալները հիշյալ դերատեսչությունների կողմից համաձայնեցվում են Կապի ժողկոմատի, իսկ տեղերում՝ Կապի Վարչությունների հետ:

8. Այն տրանսլյացիոն հանդույցները, վոր սպասարկումն արտադրության կուլտկենցաղային կարիքները տերիտորիալ կերպով վորոշ արտադրական ռայոնում, ինչպես նաև կոլեկտիվ ոգտագործման այնպիսի տեղերում, վորոնք պատկանում են հիշյալ հան-

դույցին՝ դտնվելով այդ ռայոնից դուրս (ակումբ, կարմիր անկյուն, այգի, սպորտ-հրապարակ, ստադիոն, դպրոց) ռադիո ունկնդրման աբոնեմենտային վճարն ըստ կվարտալների մուծում են Կապի ժողկոմատի այն ռադիո հանդույցը, վորտեղ ցուցակագրված են նրանք, հատուկ անդորրագրերով, միայն ռադիոհանդույցի համար անկախ լսողության կետերի թվից, հետևյալ չափերով—

ա) Մինչև 10 վատտ (ներառյալ) անվանական յելքային կարողություն ունեցող կոլեկտիվ ոգտագործման տրանսլյացիոն ռադիո հանդույցները (դպրոցներ, ուսումնական հիմնարկներ, հանրակացարաններ, մանկատներ, մսուրները, հիվանդանոցներ, ուղղիչ տներ, սանատորիաներ խրճիթ-ընթերցարաններ և այլն) տարեկան 36 ռ.

բ) Մինչև 10 վատտ (ներառյալ) անվանական յելքային կարողություն ունեցող հասարակական ոգտագործման և արտադրական սպասարկման տրանսլյացիոն ռադիո հանդույցները (ակումբներ, կուլտուրայի և հանգստի պարկեր, այգիներ, սպորտ հրապարակներ, ճաշարաններ, հյուրանոցներ, ճամբարներ, կայաններ, տուրիստական բազաներ, դյուղացու և կոլտնտեսականի տներ, ֆաբրիկաներ, գործարաններ, մեքենատրակտորային կայաններ, կոլտնտեսություններ, խորհտնտեսու-

թյուններ, դյուղխորհուրդներ և այլն) տարեկան 50 ռ.։

գ) 11–ից մինչև 50 վատտ (ներառյալ) անվանական յելքային կարողություն ունեցող տրանսլյացիոն ռադիո հանգույցները, անկախ նրանից, թե ում են սպասարկում, տարեկան 100 ռ.։

դ) 51–ից մինչև 200 վատտ (ներառյալ) անվանական յելքային կարողություն ունեցող տրանսլյացիոն ռադիո հանգույցները, անկախ նրանից, թե ում են սպասարկում, տարեկան 300 ռ.։

ե) 201–ից մինչև 500 վատտ (ներառյալ) անվանական յելքային կարողություն ունեցող տրանսլյացիոն ռադիո հանգույցները, անկախ, նրանից թե ում են սպասարկում, տարեկան 500 ռ.։

զ) 500–ից ավելի վատտ անվանական յելքային կարողություն ունեցող տրանսլյացիոն ռադիո հանգույցները, անկախ նրանից, թե ում են սպասարկում տարեկան 750 ռ.։

է) Ռադիո հաղորդումների ընդունման իրավունքի աբոնեմենտային վճարից ազատվում են՝

1. Այն տրանսլյացիոն ռադիո հանգույցները, վոր սպասարկում են միմիայն արտադրության կամ տեղական ինֆորմացիային և չեն զբաղվում ռադիո հաղորդումների տրանսլյացիայով (կայարանների ռադիո սարքավորումները՝ ուղեվորներին ինֆորմացիա տալու համար, խանութների ռեկլամային սարքավորումները, հրդեհի ազդանշանները, արտադրական ցեխային կապը և այլն) բայց պարտավոր են ներկայացնել տրանսլյացիոն հանգույցի ֆորմուլյարը Կապի Ժողկոմատի շրջանային կամ կենտրոնական քաղաքային ռադիո հանգույցներին։

2. Այն տրանսլյացիոն ռադիո հանգույցները, վորոնք սպասարկում են միայն այն աբոնեմենտներին, վորոնցից աբոնեմենտային վճարը դանձվում է համաձայն սույն կանոնների 9–րդ կետի։

9. Քաղաքներում և գյուղերում անհատ և կոլեկտիվ աբոնենտներին սպասարկող տրանսլյացիոն ռադիո հանգույցները, անկախ նրանից, թե ում են պատկանում, իրենց ռադիո հանգույցների աբոնենտներից 1934 թ. հունվարի մեկից դանձում են աբոնեմենտային վճար տեխնիկական սպասարկման և ռադիո լսողության համար ամսական հետեվյալ չափերով ըստ գոտիների։

Թվանշանները	Ազգությունը (ազգանունը) Ամբողջությունը	I գոտի			II գոտի			III գոտի		
		Տեսակարար դարձիրտ	Թաղեր	Ամբողջ	Տեսակարար դարձիրտ	Թաղեր	Ամբողջ	Տեսակարար դարձիրտ	Թաղեր	Ամբողջ
1.	Բաշկիրներ	1—20		—60	1—60		—80	1—70		—80
2.	Կուլանդական	1—40		—60	1—70		—80	2—		1—
3.	Մառայոցներ	2—		1—	2—30		1—20	2—60		1—40
4.	Կուլեկտիվ ոգեստեղծության դեմքերի տասնամյակ նշանակ ձևավորման դարաշրջանում և կերպարվեստներում									
5.	Կոլեկտիվ ոգեստեղծության կեսաց տեսքերն կան տիպի ձևավորումներում	4—		2—	5—		2—60	7—		3—
		10—		5—	12—		6—	16		8—

I գոտու մեջ են մտնում

Յակուտիայի ԻՍԽՀ, Արևելյան-Սիբիրի Յերկիրը, Հեռավոր Արևելյան Յերկիրը, Կազակստանի ԻՍԽՀ, Կարա-Կալպակի ԻՍԽՀ, Տաճիկստանի ՍԽՀ, Թուրքմենստանի ՍԽՀ, Ուզբեկստանի ՍԽՀ, Թուրքմենստանի ՍԽՀ, Կարելիայի ԻՍԽՀ, Հյուսիսային Յերկիրը, Ոբ Իրտիշի մարզը, Մուրմանսկի շրջանը, (Լենինգրադի մարզի):

II գոտու մեջ են մտնում

Անդրկովկասի ՍՖԽՀ, Բելոռուսիայի ՍԽՀ, Ղրիմի ԻՍԽՀ, Բաշկիրիայի ԻՍԽՀ, Մոլդավիայի ԻՍԽՀ, Արևմտյան-Սիբիրի Յերկիրը, Դաղստանի ԻՍԽՀ, Իվանովյան մարզը, Միջին Վոլգայի Յերկիրը, Կենտրոնական սևահող մարզը, Թաթարստանի ԻՍԽՀ, Արևմտյան մարզը, Զերնիգովի մարզը, Հյուսիսային Կովկասի Յերկիրը:

III գոտու մեջ են մտնում

Մոսկվայի մարզը, Մոսկվա քաղաքը, Լենինգրադի մարզը, (առանց Մուրմանսկի շրջանի) Լենինգրադ քաղաք, Սարատովի մարզը, Ստալինգրադի մարզը, Սվերդլովսկի մարզը, Զեյլաբինսկի մարզը, Գորկու յերկիրը, Ազով-Սևծովյան Յերկիրը, Խարկովի մարզը, Կիևի մարզը, Դոնի մարզը, Դնեպրոպետրովսկի մարզը, Ոդեսայի մարզը:

10. Այս կամ այն կետեգորիային պատկանելու հանդամանքը սահմանվում է հիմնարկից, ձեռնարկից, կազմակերպությունից համապատասխան տեղեկանք ներկայացնելու միջոցով:

11. Բանվորներին հավասարեցված անձինք (ինժեներա-տեխնիկական աշխատողները) վճարում են բանվորների համար սահմանված չափով, յեթե նրանք աշխատում են անմիջականորեն արտադրության մեջ: ԲՈՒՀ-երի և տեխնիկումների պետական թոշակառու ուսանողներն արոնեմենտային վճարը մուծում են բանվորների համար սահմանված չափով: Այն ծառայողները և կենսաթոշակառուները, վորոնք ստանում են մինչև 100 ռ. և հանդիսանում են ընտանիքի միակ աշխատողը, վճարում են բանվորների համար սահմանված չափով:

12. Մենատնտես գյուղացիները, տնայնագործները և կոոպերատիվ արհեստագործական արտելների անդամները, ազատ պրոֆեսիայի տեր անձինք վճարում են ծառայողների համար սահմանված չափով:

13. Տեխնիկական սպասարկման արոնեմենտային վճարի վերոհիշյալ չափերը պարտադիր են Կապի Ժողկոմատի ռադիո հանդույցների համար, իսկ այլ դերատեսչությունների և կազմակերպությունների հանդույցների համար այդ վճարը կարող է լինել նաև յա-

ծը, սակայն բարձր վոչ մի դեպքում չի թույլատրվում, իսկ ռադիո ունկնդրման արոնեմենտային վճարի չափերը յենթակա չեն փոփոխման:

14. Նույն բնակարանում մի քանի բարձրախոս չունենալու դեպքում արոնեմենտային վճարը դանձվում է ամեն մեկի համար առանձին-առանձին՝ սահմանված տարիֆային չափով:

15. Տեխնիկական սպասարկման և ռադիո ունկնդրման արոնեմենտային վճարները արոնենտը մուծում է տրանսլյացիոն հանդույցը, ամեն ամիս և անպայմանորեն միասին՝ մի ամիս առաջ, վճարվելիք ամսվա նախորդի 15-ից մինչև 30-ը, մի անդորրագրով (որդերով), վորի վրա նշվում է մուծվող գումարը տեխնիկական սպասարկման և ռադիո ունկնդրման համար առանձին-առանձին:

16. Ռադիո հանդույցի տրանսլյացիոն ցանցին միացված բարձրախոսը 5 որից ավել լռելու դեպքում, վոր հայտարերվում է մադիստրալ գծի անկանոնության կամ արոնենտի հայտնած բողոքի պատճառով, կետի լռելու ժամանակաշրջանում արոնեմենտային վճարը վոչ թե պահվում է հանդույցից, այլ հետևյալ ամսի հաշվումների ժամանակ հաշվի յե առնվում համապատասխան գումար:

Այդ գումարը հաշվի առնելու համար հիմք է ծառայում տրանսլյացիոն հանդույցի

վնասված քների մատյանի մեջ կատարվող համապատասխան գրանցումը, վորի №-ը պարտադիր կարգով հայտնվում է արոնենտին:

Ծանոթություն.— 1· 1934 թ· 1-ին կվարտալում արանսլյացիոն ռադիո հանգույցների չաշխատած ռադիո կետերի համար գումարը դանձվում է:

2· Բարձրախոսի փչանալը, բնակարանին միացնող գծի անջատումը, հասցեն սխալ հայտնելը և տարերային պատահարները չեն կարող հիմք ծառայել չմուծելու արոնեմենտային վճարը:

17· Տեխնիկական սպասարկման արոնեմենտային վճարը մնում է ռադիո հանգույցներում, իսկ ռադիո ունկնդրման վճարը, վորից 4 տոկոսը հանվում է դանձելու հաշվին, կապի շրջանային բաժնի կամ նրա ձեռնարկների միջոցով ուղարկվում է ռադիոֆիկացիայի և ռադիո հաղորդման Համամիութենական Կոմիտեին, համաձայն Կապի Ժողկոմատի հրահանգի, վոր վերաբերում է ընդունող ռադիո սարքավորումներից ոգտվելու համար արոնեմենտային վճար դանձելու կարգին:

ՀԱՏՎԱԾ III

ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

18· Ռադիո ունկնդրման արոնեմենտային վճարից ամբողջովին ազատվում են՝

ա) Կապի Ժողկոմատի, Հաղորդակ· ճանապարհ· Ժողկոմատի, Ջրային Ժողկոմատի Ռազմա-Ծովային Ժողկոմատի և այլ գերատեսչությունների պաշտոնական ռադիո-շրջաբերական կապը (յերկկողմանի և միակողմանի)·

բ) ՄՏԿ-ների, խորհտնտեսություններ և գյուղխորհուրդների ռադիո-շրջաբերական կապը:

գ) Փողոցի բարձրախոսները·

դ) ՏԱՍՍ-ի և թերթերի խմբագրություններին կից այլ ինֆորմացիաների ընդունման համար ծառայող սարքավորումները·

ե) Այն շարժական ռադիո ընդունիչները, վորոնք սպասարկում են գյուղատնտեսական կամպանիաներին և աշխատում են յերկրաբանական հետախուզությունների, մշակումների, արհեստագործական աշխատանքների ժամանակ:

զ) Կույրերը— համաձայն տեղական սոցապներից տրվող վկայականների:

Ծանոթություն.— Տեխնիկական սպասարկման արոնեմենտային վճարից կույրերն ազատվում են 50 տոկոսի չափով:

է) Եքսպերիմենտալ աշխատանք տանող ռադիո սիրողները,— համաձայն Ռադիոֆիկացիայի և Ռադիո Հաղորդման Համամիութենական Կոմիտեի տված վկայականների· նրանց համար միջնորդում են Համ· ԼԿՅԵՄ Կենտկոմին կից, ռադիոֆիկացիայի աջակցող կոմիտեները:

Բոլոր տեսակի արոնեմենտային վճարներից 50 տոկոսը զեղչ է արվում՝

ա) Նախկին կարմիր պարտիզաններին և կարմիր զվարդիականներին.

բ) Անհատական կենսաթոշակ ստացողներին.

գ) ԽՍՀ Միության շքանշաններով պարգևատրվածներին.

դ) Աշխատանքի հերոսներին.

ե) Կենսաթոշակ ստացող այն անձանց, վորոնք զրկված են տեղից շարժվելու ընդունակությունից՝ համաձայն տեղական սոցապներից տրվող տեղեկանքների:

ՀԱՏՎԱԾ IV

ՌԱԴԻՈ ԸՆԴՈՒՆԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

19. Ռադիո ընդունիչների տերերը պարտավոր են Կապի ժողկոմատի և նրա տեղական մարմինների վերահսկիչներին թույլ տալ տեխնիկական հետազոտում կատարելու և ստուգելու արոնեմենտային վճարի մուծման փաստաթղթերը:

20. Հաշվառման չենթարկված, վճարները ժամանակին չմուծած կամ բոլորովին չմուծած ռադիո ընդունիչներ, ռադիո հանդույցներ կամ ռադիո կետեր հայտաբերելու դեպքում՝ վերահսկիչները տեղում արձանագրություն են կազմում 2 որինակից՝ հետևյալ ձևով՝

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №...:

« » . . . . . 193 թ.

Սույնը կազմված է այն մասին, վոր այցելելով. . . . . փողոցի վրա գտնվող № . . . տունը, № . . . . բնակարանում,

ազգանունը . . . . . .

անունը . . . . . հայրանունը . . . . .

պաշտոնը . . . . . ամսական աշխատավարձի չափը . . . . .ռ. վորտեղ է աշխատում (հիմնարկության անունը և հասցեն)...

. . . . . փողոց. . . . . №. . . .

ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ Է (մատնանշել՝ ինչո՞ւմքն է արտահայտվել խախտումը՝ չի վճարված բոլորովին և վոր կվարտալում կամ տարիֆի համաձայն չի մուծված և այլն) . . .

. . . . . .

. . . . . տեսակի (տրանսլյացիոն ռադիո կետի լամպային կամ դեդեկտորային ընդունիչ, բարձրախոսներ և այլն)

Ցերբ է դրված ընդունիչը

« » . . . . . 193 թ.

ամսաթիվը

Ռադիո ընդունիչի համարը—

ՎԵՐԱՀՍԿԻՉ

Ազգանունը . . . . . .

Պաշտոնական վկայականի № . . .

21. Արոնենտներին չի թույլատրվում վորևվե դրամական հաշվի մեջ մտնել տեխնիկական պերսոնալի հետ:

22. Աբոնենտը պարտավոր է արձանագրություն ստանալով՝ վճարել ամբողջ պարտքը. բացի դրանից, նրա վրա տուգանք է տրվում համապատասխան տիպի ռադիո ընդունիչի աբոնեմենտային կիսամյա վճարի չափով, որը գանձվում է Կապի Ժողկոմատի մարմինների կողմից անվիճելի կարգով՝ կիրառելով գանձման հարկադրման միջոցները, որ նախատեսված են 1932 թ. սեպտեմբերի 17-ի կանոնադրության մեջ՝ հարկերի և վոչ հարկային վճարումների գանձման մասին (ԽՍՀՄ Ո. Ժ. 1932 թ. №69, հոդ. 440):

23. Կապի ստորին որգանների կողմից տուգանքի նշանակումը կարող է վերանայվել (համաձայն աբոնենտի բողոքի) ավելի բարձր մարմինների կողմից, շրջաններում՝ կապի շրջանային բաժինների պետերի, իսկ մարզային, յերկրային և հանրապետական կենտրոններում՝ կապի վարչությունների ռադիո տեսչությունների կողմից:

Բողոք տալը չի դադարեցնում գանձումը:

24. Տնային վարչությունները, բնակվարձկոոպ ընկերությունները, տնատերերը և կապալառուները, իսկ գյուղական վայրերում՝ գյուղխորհուրդները պարտավոր են ստուգել ռադիո ընդունիչների և ռադիո կետերի թույլտվության և ցուցակագրման փաստաթղթերը չցուցակագրվածների հայտաբերման դեպքում հայտնել կապի տեղական շրջանային կամ քաղաքային բաժնին:

Կապի Ժողկոմատի վերահսկիչի կողմից չցուցակագրված ռադիո ընդունիչներ հայտաբերվելու դեպքում՝ բնակվարձկոոպ-ընկերությունները, տների տերերն ու կապալառուները և գյուղխորհուրդները պատասխանատվություն են կրում վորպես թաքցնողներ:

25. Կանոնները կիրառման մեջ են դրվում 1934 թ. հունվարի 1-ից՝ ռադիոտնտեսության ամբողջ սիստեմում: Սույն կանոնները և ռադիո ընդունիչներից, տրանսլյացիոն ռադիո հանգույցներից ու տրանսլյացիոն ռադիո կետերից ոգտվելու աբոնեմենտային վճարի գանձման կարգի մասին հրահանգը կիրառման մեջ դնելու վայրկյանից սկսած՝ կապի Ժողկոմատի ներքոհիշյալ հրամանները և վորոշումները կորցնում են իրենց ուժը.—

1) Հրաման № НР/ 390, 33 թ. 17/5, հրապարակված 1933 թ. № 15 բյուլետենում, եջ 7.:

2) Հրաման № НУФ/ 491, 33 թ. 22/6, հրապարակված 1933 թ. № 19 բյուլետենում, եջ 10.:

3) Հրաման № НР/570, 33 թ. 27/6, հրապարակված 6933 թ. № 21 բյուլետենում, եջ 4.:

4) Հրաման №НР/733, 33 թ. 29/9, հրապարակված № 28 բյուլետենում, եջ 11.:

59 Հրաման НР/785, 33 թ. 31/12, հրապարակված № 29 բյուլետենում, եջ 2.:

6) Հրաման № НР /794, 33 թ. 4/11, հրապարակված № 29 բյուլետենում, եջ 3։

7) Հրաման № ПДФ /13, 33 թ. 11/12, հրապարակված 1934 թ. № 1 բյուլետենում։

8) Կապի ժողկոմատի Կոլեգիայի 1932 թ. 5/3 վորոշման այն մասը, վոր վերաբերում է աբոնեմենտային վճարի դիֆերանցիալ տարիֆներին։

ՊԵՏ. ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀԱՅԿ—ССРА
им. А. Мясникяна
Ա. Մասնիկյանի անվան

ՑԱՆԿ

1. Տրանսլյացիոն հանգույցների աշխատանքներն աբոնեմենտային վճարի գանձման մասին 3
2. Ռադիո Կոմիտեների և Ռադիո Հաղորդման լիազորների դերը տրանսլյացիոն հանգույցներում աբոնեմենտային վճարի գանձման վերահսկողության գործում 9
3. Ի՞նչ պետք է իմանա յուրաքանչյուր ռադիո լսող՝ աբոնեմենտային վճարի մասին 14
4. Ի՞նչ պետք է իմանան աբոնեմենտային վճարի մասին նամակատարները, հանգույցի մոնտյորները, փոստային ձեռնարկների և այլ աշխատողները . . . 23
5. Ի՞նչով է տարբերվում այս տարվա աբոնեմենտային վճարի կարգն այն կարգից, վոր գոյություն ուներ անցյալ տարի 31
ԽՍՀՄ ԺողկոմխորհԻ 1934 թ. մարտի 27-ի № 656 վորոշումը 35
ԽՍՀՄ ԺողկոմխորհԻՆ կից Համ. Ռադիո Կոմիտեյի 1934 թ. ապրիլի 15-ի վորոշումը 48
Ցուցանիշներ 52
Կանոններ ռադիո ընդունիչներից, տրանսլ. ռադիո հանգույցներից և տրանսլյացիոն ռադիո կետերից ոգտվելու կարգի մասին 58

ՀՀ Ազգային գրադարան
NL0298282

23.761